



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


Утпк

1949



ՓԵՂՐԱ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Յ. ՌԱՍԻՆԻ



1871

STATE OF NEW YORK

1871

84
N-22

ար.

20 APR 2006

Փ Ե Դ Ի Ը

19 NOV 2010

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Յ. ՌԱՍԻՆԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

ԵԴՈՒԱՐԴ Վ. ՀԻԻՐՄԻԻԶ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԻՐԱԿԱՅ

569



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԻԻԹԱՐԵԱՆՅ

1861

NOV 10 2013
APR 3008

Ф Р Б У

УДК 62-50

УДК 62-50

УДК 62-50



Р 22

3941
41

1949-2014

18 1946

УДК 62-50

УДК 62-50

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆՍ

Թե սէոս յետ յաղթելոյ Պալլասեանց՝ որ դարա-
նակալք լինէին արքայութեան նորա, նուաճեալ ա-
ջակցութեամբ հերակլեայ զԱմազոնս՝ էած իւր կին
զգշտոյ նոցա զԱնախուպէ, յորմէ ծնաւ նմա Իպպոլիտ:
Բայց ՚ի վերայ առաջին հարսանեացն ածեալ իւր կնու-
թեան և զՓեդրա դուստր Մինովայ և Պասիփայեայ
զքոյր Արիադնեայ, և կասկածեալ թէ գուցէ Իպպո-
լիտ ընդ ակամբ հայեսցի ընդ եղբայր իւր ոչ համա-
մայր՝ որ հանդերձեալն էր ծնանել ՚ի Փեդրայ, յլեաց
զՓեդրա ՚ի Տրեզեն առ հաւ իւր Պիթէոս: Բայց տիկ-
նոջն տեսանելով զԻպպոլիտ յուղեկցել նորա ընդ Թե-
սեայ հօր իւրում ընդ Տրեզեն, հարաւ ՚ի գեղ նորա-
այլ ՚ի յայտնել զտուփանս իւր նմա, փոխանակ սիրոյ
զարհուրանս ազգեալ ՚ի նա՝ առ յուսահատութեան
զըսարտեաց զնա առ այր իւր Թեսէոս ՚ի հրասպոյրս
պարկէշտութեան իւրոյ: Հաւատաց նմա Թեսէոս, և
առ զայրոյթ սրաին խնդրեաց զվրէժխնդրութիւն Պի-
սիդոնի ՚ի վերայ անպարտ որդւոյն. և մինչդեռ Իպպո-
լիտ կառավարէր ընդ ծովեզրն, նհանգ ահարկու ՚ի ծո-
վէ սարտոյց զերիվարս նորա, և հարեալ ընդ ժայռս
խորտակեցան կառքն, և ինքն անկեալ ՚ի կառաց և ՚ի
քարչ ածեալ սպանաւ: Իսկ Փեդրա տանջեալ ՚ի խղ-
ճէ՝ յայտնեաց Թեսէոսի զմեղանան, և չոգաւ զիւրովին:

Այնու ճարտարութեամբ զվէպս զայս ողբերգէ
քերթողս, զի ոչ միայն գերազանցեալ զԵւրիպիդեալ՝
որ զնոյն վէպս ողբերգեաց, այլ և մի ՚ի գերակատար
ողբերգութեանց յօրինէ զսա ամենայն մասամբք. և

դժանատ անաջարկութիւնն հրաշալի արուեստիւ ճա-
հաւորեալ պարկէշտ լսելեաց, զօգուտ և զպուարճու-
թիւն պքանչելապէս 'ի սմա կցորդէ:

Զայս 'ի թախանձելոյ ազգայնոց ստիպեալ յեղու-
'ի մերս, ակն ունիմք զի լիցի յօգուտ և 'ի խրատ երի-
տասարդ հասակին զգարչութիւն և զաղէտս դժնեայ
կրիցն նշաւակեալ անաջի նոցա:

Ա Ն Ձ Ի Ն Ք

ԹԵՍԷՈՍ արքայ աթենացոց, որդի Եգէոսի:

ՓԵՂՐԱ, կին Թեսէոսի, դուստր Մինովայ և Պասիփայեայ:

ԻՊՊՈԼԻՏ որդի Թեսէոսի և Անտիոպեայ, գշխոյի Ամազոնաց:

ԱՐԻԿԻՍ, Թագաւորազն աթենացի:

ԵՆՈՆԷ դայեակ եւ մտերիմ՝ Փեգրայ:

ԹԵՐԱՄԵՆ դաստիարակ Իպպոլիտայ:

ԻՍՄԵՆԷ մտերիմ Արիկեայ:


ՊԱՆՈՊԷ նաժիշտ Փեգրայ:

ԹԻԿՆԱՊԱՀՔ:

Տեսարանն է 'ի Տրեզին քաղաք 'ի Պեղոպոնեսս:



Փ Ե Պ Ր Ա



Հ Ա Ն Գ Է Ս Ա Ռ Ա Ջ Ի Ն



Տ Ե Ս Ի Լ Ա

Ի Պ Պ Ո Լ Ի Տ , Թ Ե Ր Ա Մ Ե Ն

Ի Պ Պ Ո Լ Ի Տ

Այո՛, այդպէս արարից , ո՛ սիրեցեալդ իմ թերամեն .
 Ահա մեկնիմ , ըզցանկալինն ի բնակու-թիւն թողեալ Տրեզնն :
 Ի դառնաղէտըն կասկած՝ յոր տազնապիմըս մըտայոյզ ,
 Ամաչել ըսկըսանիմ զի մինչև ցարդ կացի անգործ .
 Անցին ամիսք քան ըզվեց զի ի հօրէ իմմէ հեռի
 Չըզիտեմ ինչ զողջունէ ըզկարեւորըն սիրայնոյ ,
 Եւ ո՛ւր ուրեք իցէ նա արդ՝ զայն իսկ ի սպառ անգիտանամ :

Թ Ե Ր Ա Մ Ե Ն

Ո՛ւր ապա , տէր իմ , ի խընդիր նորին յածեալ շորջիցիս .
 Վաղ իսկ ես ինքն ի հանդարտել զիրաւացի կասկած քոյին ,
 Ընթացայ ծովէ ի ծով՝ որ կորընթեալն անջըրպետին .
 Հարցի զթեոսեայ զազգըս բնակեալս ի ծովեզերս անդ՝ մինչ ի
 Ուր Ախերոն գետահետեալ գընայ ի դժոխըս կորընչի . [վայրս
 Չոգայ յԵլիս , անցի գնացի ի Տենարայ մինչ անդր ի ծով
 Որ զիկարեայ ետես անկուփն յերկնէ յալիս իւր ի ստոր :
 Եւ ո՛ր սյլ յոյս , ո՛ր բարեբաստ գաւառ երկրի տայ քեզ խրախոյս
 Հետազօտել ըզնա , գտանել կարծեալ ըզհետըս նորին .
 Ո՞ գիտէ զի չկամիցի իսկ թերեւս հայր քոյին արքայ
 Թէ գիտիցէ ոք ըզգաղտնիս դեզերանացըն տարաղէմ .
 Թերեւս ուր մեք եւ դու զկենաց նորին ի հոգըս տազնապիմք ,
 Ինքն յանդորրու ըզնորասէր ի մէնջ ըզտուիփսըն թագուցեալ ,
 Պարապէ ի հրատուրել զիւցազնըն զոք ի սիրուհեաց . . .

ԻՊՊՈԼԻՏ

Մի, սիրեցեալդ իմ Թերամեն, լուռ լեր եւ ակն ած ի Թեսեայ .
 Վաղ իսկ նորա յանտիական զառաճանացն ըզգաստացեալ,
 Ոչ եւս անճաճ ինչ խոչընդոտն ուղւոյ նորին լինի խափան .
 Իրժոխըմբեր յողորողութեան բաղձիցն առեալ վաղ իսկ ըզ-
 Ոչ եւս ոսոխ ոք ի բազմաց հետէ Փեղբայ արկանէ ահ : [կայ,
 Թէ ոչ այլ ինչ, բայց ի խընդիր նորին ըզպարտս իմ արարից,
 Եւ խուսեցից ի վայրաց՝ յորս ակնարկել ոչ եւս իշխեմ :

ԹԵՐԱՄԵՆ

Աւաղ, եւ երբ դու յերեսաց վայրացս առեր տէր զայդ խորշումն,
 Ի տղայ տիոց գորով այնչափ քեզ սիրելի վայրքս անխըռովք,
 Զոյց առաւել դու, գիտեմ, մեծարէիր ըզքնակութիւն
 Քան զաղմուկըս փառաւորըս զԱթենայ եւ զարքունեաց .
 Ո՞ր վըտանգ, ո՞ր մանաւանդ ըզքեզ աստի հալածէ վիշտ :

ԻՊՊՈԼԻՏ

Անցին աւուրք բարբառաստիկք, յեղափոխեալ արդ ամենայն
 Յորմէհետէ Պասիփայեայն եւ Մինովայ դուստր առ մեզ
 Ի ցասմանէ դիցն առաքեալ եկն ի յափունս յայսոսիկ :

ԹԵՐԱՄԵՆ

Գիտեմ, եւ չէ ինչ զանխուլ առիթ վըշտաց քոյոց յինէն .
 Փեղբա է վիշտ քո աստանօր, նա խոցէ նա զաչըս քոյին :
 Մօրու դաժան, ընդ գալ իւր այսր՝ արար յաքսոր քո իւր անուն .
 Այլ որ երբեմնն զայրացեալ ատելութիւն իւր ընդ քեզ,
 Կամ շիջեալ է արդ ի սպառ, եւ կամ կարի իսկ թուլացեալ :
 Սակայն զո՞ր երբէք վըտանգ հասուցանել քեզ կարասցէ
 Կին կիսամեռ, այն որ մահուն իւրոյ շըրջի յար ի խընդիր .
 Փեղբա ընկճեալ յաղիտից՝ զոր յամառի նա ի լըռել,
 Զանձրատաղտուկ յինքենէ եւ յարևէ զոր տեսանէ,
 Իցէ թէ զօրեսցէ նիւթել ընդդէմ քո չարիս :

ԻՊՊՈԼԻՏ

Ոչ ընդունայն ատելութիւն իւր արկանէ ինձ երկեղուկ .
 Ի մեկնել իւր Իսպոլիտ խոյս ի յայլմէ տայ թըշնամւոյ .
 Յօրիորդէն Արիկիայ խուսեմ, եղէց խոստովան,
 Այն որ ժանտի ազին ճետ երդուեալ ընդդէմ մեր ոսոխի .

ԹԵՐԱՄԵՆ

Եւ ո՞րպէս տէր, իցէ թէ դու իսկ զօրիորդն հալածիցես .

Մի թէ երբէք անողորմիցըն Պալասեանց քոյր սիրելի
Եղէ՞ ինչ ինքըն մասնակից դաւոյ եղբարցըն դըրժողաց .
Արժան իցէ քեզ ատել զանմեզ հրապոյր գեղոյ նորին :

ԻՊՊՈԼԻՏ

Թէ ատէի ես ըզնա , չտայի արդեօք խոյս ի նմանէ :

ԹԵՐԱՄԵՆ

Ներեա ինձ տէր ըզփախըստեան քո ըզգաղտնիս հետազօտել .
Է՞ իսկ հընար զի դու ոչ եւս իցես գոռոզն այն Իսպոլիտ ,
Ոչ եւս անհաշտ դու թըշնամի սիրատարփիցն օրինաց ,
Եւ լըծոյ՝ զոր այնքանիցըս Թեսէոս իսկ ըստանձնեաց :
Ասողիկըն ցարդ արհամարհեալ ի խրոխտանաց քոց ընդ երկար ,
Իցէ՞ թէ արդ կարողասցի առնել Թեսեայ իրաւունս ,
Իցէ՞ թէ հարկ առնիցէ եւ քեզ ընդ այլս ի մահացուաց ,
Խունկս ի բագին իւր արկանել , իցէ՞ թէ է եւ ի քեզ սեր :

ԻՊՊՈԼԻՏ

Ձի խօսիս իմըս Թերամեն . դու որ գիտես զիմ սիրտ ի ծնէ ,
Դու ըզկըրից այսպիսւոյ արհամարհոտ եւ խրոխտ սըրտի
կարիցես , ո՞ Թերամեն , խընդրել ժըխտումն ամօթալի :
Թող զի մայր Ամազուհի դիեցոյց ինձ խառն ընդ կաթին
Գոռոզութիւն՝ ընդ որ յապուշ լեալ հիացեալ զարմանաս , [ցեալ
Ես ինքն ի տիս այն ինչ հասեալ եւ զանձն իմ այն ինչ ծանու-
Եղէ ի յանձըն խրոխտապանձ . եւ դու դրանիկդ հաւատարիմ
Դու պատմէիր ինձ յայնժամ զանցս եւ զարկածըս հայրենի .
Գիտես իսկ դու սիրտ իմ յայնժամ իբր ի շըրթունըս քո յայթիո ,
Վառէր ի լուր այնպիսեաց վեհ յաղթանակաց հօր իմոյ ,
Ի նըկարել քո զգիւցազինն ինձ անվեհեր արիութիւն ,
Իբր ըսփոփեալ նորա զլըքեալս ի յԱլկիդեայ մահկանացուս ,
Իբր ըզհրէշըս սատակեալ , պատուհասեալ ըզյելուզակս ,
ԸզՍինիս ըզՊրոկրոս ըզկերիոն եւ զըՍկիրոն ,
Ձեպիդաւրեան հըսկային իբըր ցանեալ զոսկերս ի ցրօն ,
Եւ ըզկրետէ ծըխեալ յարիւն սատակամահ մարդացըլոյն :
Այլ յորժամ դու պատմէիր զանփառունակ գործըս նորին ,
Ի բիւր տեղիս ի նմանէ տըւեալ խոստումն եւ ընկալեալ ,
Հեղինէ ի Սպարտա յիւրոց ծնողացն առեւանկեալ ,
Լալեացըն Պերիպեայ ականատես լեալ Սալամիս .
Եւ այլք յոգունք՝ զորոց եւ ինքն իսկ ոչ յիշէ այժմիկ զանուանս՝
Դիւրահաւանք ի բոց բաղձից նորա ի խաբս ըմբընեալք .
Արիադնէ ըզգըրկանսն առ ի նմանէ ժայռից պատմեալ ,
Եւ փեղրա բարեգուշակ եւս ի հըմայս յափըշտակեալ .

Գիտես քանի դժգոհմանկ ի լուր զբուցաց քոց այդոցիկ
 Ըստիպէի գքեզ յաճախ ըզվէպս իրացն համառօտեւ .
 Զայնպիսւոյն չըքնաղազեղ վիպաց յանկարծ տայր որ ինձ
 Եղծանել անյիշատակ առնել զայդ կէս մասն անարժան ,
 Եւ գտանիցիմ եւ ես գերի , ցայնվայր զիս գիցըն խոնարհեալ ,
 Ի հառաչանքս վատութեան եւրս քան զեւս անգոսնելի
 Որչափ փառաց շեղջակոյտ ներելի զկիրս առնէր Թեսեայ ,
 Որչափ զի հրէշ եւ ոչ մի յինէն ցայսվայր յաղթահարեալ ,
 Զբտայ ինձ իրաւունս ի նոյն վրիպանս անկանելոյ .
 Եթէ մարթէր գոռողութեան իմում օակաւ ինչ ամոքել ,
 Պարտ էր ինձ զԱրիկիս ընտրել նուաճող սրբախ իմոյ .
 Ոչ եւրս միաք իմ զառածեալք ըզխոչն ինձ զայն յուշ ածէին
 Որ բաժանէրն ի միմեանց ըզմեզ յաւերժ անհաշտելի .
 Դատապարտէ հայր իմ զայն , եւ արգելու խիստ օրինօք
 Մի տալ եղբարցըն քեռորդիս . ի մեղապարտ ի բնէ անախ
 Բողբօջ եւեթ վերընձիւղեալ կասկածելի է նրմա ,
 Ընդ քեռ նոցա ի միասին կամի զնոցայն թաղել զանուն .
 Զի հնազանդ մինչ ի շիրիմ ընդ տեսչութեամբ իւրով կացեալ ,
 Եւ մի հուր հարսանեկան վասըն նորա բորբոքեսցի :
 Պարտ իցէ ինձ գրաւականել յիս զիրաւունքս նորա
 Ընդդէմ հօր զայրացելոյ՝ յանդըգնութեան կացեալ տիպար ,
 Եւ մանկութիւն իմ ի շամբուշ տարփանս անկեալ ալեկոծ ...

ԹԵՐԱՄԵՆ

Ո՛հ , տէր , թէ է ժամ քո հասեալ , չգիտեն երկինք առնել հարց .
 Եւ ըզպատճառըս մեր լրսել . ի կամել զաչրս քո փակել [փորձ
 Բանայ իսկ զայնըս Թեսեոս . գըրգռէ ըզբոցն ապըստամբ
 Ատելութիւն իւր յաւելեալ շնորհս ի գեղ ատելոյն :
 Եւ թող զայս , ընդէր իցէ ի զգաստ սիրոյ զանգիտել քեզ .
 Թէ է ի նմա քաղցրութիւն , ընդէր չիշխել ճաշակել զայն :
 Կամիցիս մինչեւ ի սպառ երթալ ըզհետ վայրագ խըղճի .
 Ո՛ր երկիւղ մոլորելոյ ի գնալ ընդ հետըս Հերակլեայ .
 Զո՞ր քաջութիւն ոչ կարաց երբէք Աստղիկըն նըւաճել ,
 Ո՛ր գտանէիր դու այժմիկ , դու որ ընդդէմ իւր մարտընչիս .
 Թէ օրինաց նորա ի սպառ . Անտիոպէ ըզդէմ կալեալ
 Զէր եւ չէր ողջախոհ տարփամամբ վառեալ ի սէր Թեսեայ :
 Զինչ օգուտ վեր ի վերոյ ճառըս ճոռոմս արկանել .
 Զկարես ժըխտել , զի ամենայն ինչ փոփոխեալ յաւուրց հետէ ,
 Ոչ դու յաճախ որպէս միշտըն տեսանիս վայրագ եւ խրոխտ
 Մերթ կառս ընդ ծովափունքս վարելով արշաւատոյր ,
 Եւ մերթ հըմուտ դու արուեստին՝ զոր Պիսիդոն հանճարեաց՝
 Նըւաճելով ըզխըստերախ սանձահարեալ երիվար .

Ոչ որպէս միշտն անտառք ըստէս ի յաղաղակըս քո հընչեն .
 Ի հուր գաղտնածածուկ ընկճեալ աչկունք քո ծանրանան .
 Ոչ եւրս գոյ երկուանալ , է ի քեզ սէր , է հուր ի քեզ .
 Ըսպառիս ի վըշտէ՝ զոր դու հնարիս թագուցանել .
 Չըքնաղագեղն Սըրիկիս գիտաց ըզսիրտ քոյին գրաւել :

ԻՊՊՈՂԻՏ

Մեկնիմ ես , թերամենէ , ի խընդիր հօրն իմոյ գնամ :

ԹԵՐԱՄԵՆ

Մինչեւ մեկնեալ քո տէր աստի՝ ո՛չ կամիս այց առնել Փեղրայ :

ԻՊՊՈՂԻՏ

Այգպէս եւ ինձ է ի մըտի , արա դու զնա կանխաղեկոյց .
 Տեսցուք ըզնա , քանզի այսպէս ինձ զայդ եւ պարտք իմ հրամայ-
 Այլ ո՞ր այն նոր ըզմըտերիմն իւր զԵնոնէ տագնապէ վիշտ : [Են :

ՏԵՍԻԼ Բ

ԻՊՊՈՂԻՏ , ԵՆՈՆԷ , ԹԵՐԱՄԵՆ

ԵՆՈՆԷ

Աւա՛ղ աղետիս , ո՞ր այն տագնապ հանգոյն իմոյս .
 Զուր հըսկեմ , տէր , ցայգ եւ ցերեկ , դըշխոյն գողցես օրհասաւ .
 Մեռանել թըլի ի գիրկս իմ առ վըշտին՝ զոր ինձ լուէ . [կան ,
 Աղմուկ յաւերժական բըռնակալէ ի սիրտ նորա ,
 Եւ ոչ ներէ նըմա կալ ի յանկողնի վիշտ անհանգիստ .
 Խընդրէ նա զտիւ , այլ առ սըրտին իւրոյ աղէտ դառնակըսկիծ
 Մի՛ զոր առ ինքըն մուծանել ինձ հրամայէ . ահա գայ նա :

ԻՊՊՈՂԻՏ

Բաւ է , թողից ըզնա աստ , մի տեսցէ նա դէմս ատելի :

Գիտես քանի դժգոհամակ ի լուր զբուցաց քոց այդոցիկ
 Ըստիպէի զքեզ յաճախ ըզվէպս իրացն համառօտել .
 Զայնպիսոյն չըքնաղազեղ վիպաց յանկարծ տայր ոք ինձ
 Եղծանել անյիշատակ առնել զայդ կէս մասն անարժան ,
 Եւ գտանիցիմ եւ ես գերի , ցայնվայր զիս դիցըն խոնարհեալ ,
 Ի հառաչանքս վատութեան եւրս քան զեւս անգոսնելի
 Որչափ փառաց շեղջակոյտ ներելի զկիրս առնէր թեսեայ ,
 Որչափ զի հրէշ եւ ոչ մի յինէն ցայսվայր յաղթահարեալ ,
 Զըտայ ինձ իրաւունս ի նոյն վրիպանս անկանելոյ .
 Եթէ մարթէր գոռողութեան իմում սակաւ ինչ ամոքել ,
 Պարտ էր ինձ զԱրիկիա ընտրել նուաճող սրբաթի իմոյ .
 Ոչ եւրս միտք իմ զառաճեալք ըզխոջն ինձ զայն յուշ ածէին
 Որ բաժանէրն ի միմեանց ըզմեզ յաւերժ անհաշտելի .
 Դատապարտէ հայր իմ զայն , եւ արգելու խիստ օրինօք
 Մի տալ եղբարցըն քեռորդիս : Ի մեղապարտ ի բնէ անտի
 Բողբոջ եւեթ վերընձիւղեալ կասկածելի է նրմա ,
 Ընդ քեռ նոցա ի միասին կամի զնոցայն թաղել զանուն .
 Զի հնազանդ մինչ ի շիրիմ ընդ տեսչութեամբ իւրով կացեալ ,
 Եւ մի հուր հարսանեկան վասըն նորա բորբոքեսցի :
 Պարտ իցէ ինձ գրաւականել յիս զիրաւունքս նորա
 Ընդդէմ հօր զայրացելոյ՝ յանդըգնութեան կացեալ տիպար ,
 Եւ մանկութիւն իմ ի շամբուշ տարփանս անկեալ ալեկոծ . . .

ԹԵՐԱՄԵՆ

Ո՛հ , տէր , թէ է ժամ քո հասեալ , չգիտեն երկինք առնել հարց .
 Եւ ըզպատճառըս մեր լըսել , ի կամել զաչքս քո փակել [փորձ
 Բանայ իսկ զայնքս թեսէոս . զըրգուէ ըզբոցն ապրստամբ
 Ատելութիւն իւր յաւելեալ շնորհս ի գեղ ատելոյն :
 Եւ թող զայս , ընդէր իցէ ի զգաստ սիրոյ զանգիտել քեզ .
 Թէ է ի նմա քաղցրութիւն , ընդէր չիշխել ճաշակել զայն :
 Կամիցիս մինչեւ ի սարառ երթալ ըզհետ վայրագ խըղճի .
 Ո՞ր երկիւղ մոլորելոյ ի գնալ ընդ հետըս Հերակլեայ ,
 Զո՞ր քաջութիւն ոչ կարաց երբէք Աստղիկըն նըւաճել ,
 Ո՞ւր գտանէիր դու այժմիկ , դու որ ընդդէմ իւր մարտընչիս .
 Թէ օրինաց նորա ի սպառ Անախոպէ ըզդէմ կալեալ՝
 Զէր եւ չէր ողջախոհ տարփմամբ վառեալ ի սէր թեսեայ :
 Զի՞նչ օգուտ վեր ի վերոյ ճառըս ճոռոմս արկանել .
 Զկարես ժըխտել , զի ամենայն ինչ փոփոխեալ յաւուրց հետէ ,
 Ոչ դու յաճախ օրպէս միշտըն տեսանիս վայրագ եւ խրոխտ
 Մերթ կառս ընդ ծովափունքս վարելով արշաւասոյր ,
 Եւ մերթ հըմուտ դու արուեստին՝ զոր Պիսիդոն հանճարեաց՝
 Նըւաճելով ըզխըստերախ սանձահարեալ երիվար .

Ոչ որպէս միշտն անտառք ըստէս ի յաղաղակըս քո հընչեն .
 Ի հուր գաղտնածածուկ ընկճեալ աչկունք քո ծանրանան .
 Ոչ եւրս գոյ երկուանալ, է ի քեզ սէր, է հուր ի քեզ .
 Ըսպառիս ի վըշտէ՛ զոր դու հնարիս թագուցանել .
 Ձըքնաղագեղն Արիկիա գիտաց ըզսիրա քոյին գրաւել :

ԻՊՊՈԼԻՏ

Մեկնիմ ես, Թերամենէ, ի խընդիր հօրն իմոյ գնամ :

ԹԵՐԱՄԵՆ

Մինչեւ մեկնեալ քո տէր աստի՛ ոչ կամիս այց առնել Փեղրայ :

ԻՊՊՈԼԻՏ

Այդպէս եւ ինձ է ի մըտի, արա դու զնա կանխազեկոյց .
 Տեսցուք ըզնա, քանզի այսպէս ինձ զայդ եւ պարտք իմ հրամայ-
 Այլ ո՞ր այն նոր ըզմըտերիմն իւր զԵնոնէ տագնապէ վիշտ : [Են :

ՏԵՍԻԼ Բ

ԻՊՊՈԼԻՏ, ԵՆՈՆԷ, ԹԵՐԱՄԵՆ

ԵՆՈՆԷ

Աւաղ աղետիս, ո՞ր այն տագնապ հանգոյն իմոյս .
 Զուր հըսկեմ, տէր, ցայգ եւ ցերեկ, դըշխոյն գոգցես օրհասա-
 Մեռանել թըւի ի գիրկս իմ առ վըշտին՝ զոր ինձ լըռէ . [Կան,
 Աղմուկ յաւերժական բըռնակալէ ի սիրտ նորա,
 Եւ ոչ ներէ նըմա կալ ի յանկողնի վիշտ անհանգիստ .
 Խընդրէ նա զտիւ, այլ առ սըրտին իւրոյ աղէտ դառնակըսկիծ
 Մի՛ զոր առ ինքըն մուծանել ինձ հրամայէ . ահա գայ նա :

ԻՊՊՈԼԻՏ

Բաւ է, թողից ըզնա աստ, մի՛ տեսցէ նա դէմս ատելի :

ՏԵՍԻԼ Գ

ՓԵՒՐՍ, ԵՆՈՆԵ

ՓԵՒՐՍ,

Մի այլ յառաջ, առցուք ըզկայ աստ սիրեցեալդ իմ Ենոնէ .
 Ոչ եւս, աւանդ, կարեմ յոտին կալ, զօրութիւն իմ նըւաղի,
 Աչք իմ շլանան ի դարձ արփւոյն, կըթոտին ծունկք իմ դեզեւ
[եալ: (բազմի)]

ԵՆՈՆԵ

Ամենակալ դիք, արտասուք մեր ցածուսցեն ըզձեր զայրոյթ :

ՓԵՒՐՍ,

Ծանրին շրջարշքս ինձ այսոքիկ . ծանր ինձ սնոտիքս են սեթեւ
 Ո՞ր այն ձեռնն դըժպըհի ի զօդս այսքան եւ ի հանգոյց [եթք .
 Խնամեալ ըզվարսս իմ ամփոփեաց ի ճակատուս . բընաւք ինձ
 Աձեն եւ փնաս, բընաւք ընդդէմ ինձ դաւակցեալ ի փնասել: [վիշտ

ԵՆՈՆԵ

Ի՞բբ իղձք ըզձից ըզհետ հասեալ ի նմա զիրեարս եղծանեն :
 Ո՞չ դու ինքնին, դըշխոյ տիկին, զանճահ հաճոյս քո եպերեալ
 Սուղ ինչ յառաջ զարգարելոյ ըզքեզ հրաման տայիր մեզ,
 Ո՞չ դու ինքնին ըզնախնին քո զօրութիւն ի յուշ ածեալ,
 Կամէիր երեւել եւ ելանել արտաքս ի լոյս .
 Ելեր, եւ արդ ճեպեալ ի մուտս՝ ատեաս ըզլոյս զօր խընդրէիր :

ՓԵՒՐՍ,

Տըխուր ազգատոհմին պայծառ եւ վեհըդ նախահայր,
 Դու որոյ մայր իմ դուստր իշխէր անուանել զանձըն պարծանօք
 Որ ընդ աղմուկն՝ յոր տեսանեսրդ զիս՝ գուցէ շառագունիս,
 Վերջին ի քեզ զայս նըւագ հայիմ ո՞վ լոյսդ արփիական :

ԵՆՈՆԵ

Եւ զիարդ, չեւ եւս ի բաց դընես ըզտենչդ անագորոյն .
 Տեսից ըզքեզ հանապազ հրաժեշտ տալով քո ի կենաց
 Ի հանդերձանքս մահու աղետաւորս ըզձակերտեալ :

ՓԵՒՐՍ,

Ընդէր չիցէ ինձ դիք բազմել ընդ հովանեաւ անտառաց .

Ե՞րբ իցէ ինձ կալ ի զընին անուոց հապճեպ ի պարոյր
 Ի փառաւորըն փոշոջ հոլովելոց յասպարիզի :

ԵՆՈՆԷ

Ընդէր , տիկին .

ՓԵՂՐԱ

Այլ աւաղ անմըտութեանս , ո՞ր իցեմ ես .
 Զինչ խօսիմ , ուրանօր յաճեալ շըրջին իղձք իմ եւ միտք .
 Կորուսի զիմաստութիւն , բարձին յինէն զայն դէք ի բաց .
 Ամաչեմ , ծածկեն զերեսս իմ , Ենոնէ , շառագունանք ,
 Կարի յոյժ զամօթապարտ աղէտս իմ տամ քեզ տեսանել .
 Եւ աչք իմ ահամայ լընուն լալեօք , իմս Ենոնէ :

ԵՆՈՆԷ

Ո՛հ , ամաչել թէ պարտ իցէ , ընդ լըռութիւն քո ամաչեա ,
 Որ զաղիտից քոց յաճախէ եւ եւս ի քեզ ըզդառնութիւն .
 Անաստ խնամօցըս մերոց , յորդորանացըս մերոց խուլ ,
 Զրաւել կամիս զաւուրըս քո , եւ ոչ անձին քում ողորմեալ .
 Ո՞ր մոլեգին զայրոյթ կարճէ զնոսս ի կէս ասպարիզին .
 Ո՞ր թոյն , կամ ո՞ր չարագոյժ հըմայք զաղբիւր նոցա սպառեն .
 Երիցըս դէմք երկնից ի ստուերըս քօղարկեալ մըթագնեցան ,
 Յորմէհեաէ չետուր փակել արտեւանաց քոց ի քուն :
 Եւ տիւ երիցս ըզտըխուր գիշեր արար հալածական ,
 Յորմէհեաէ նուաղի մարմին քոյին զըրկեալ ի մնընդենէ :
 Յորպիսի խորհուրդ դըժնեայ ներես անձին մըտաբերել .
 Որո՞վք իրաւամբք իշխես անձին քում հրամայել .
 Մեղանչես ի դիս որ զկեանըս զայս ետուն քեզ ի յաւանդ .
 Դաւ առըն քում գործես ում զանձըն քո ուխտիւ է քո նուիրեալ .
 Դաւ եւ որդւոց քոց հիքաց՝ արկեալ ի խիստ լուծ ըզնոսս .
 Խորհեաց զի նոյն օր ըզնոսին որբացուցեալ ի մօրէ ,
 Յոյս օտարին տացէ որդւոյ , սէգ ոսոխի քում եւ տոհմիդ
 Այնքմ զոր մայր Ամազոն կըրեաց մանուկ ի յարգանդի ,
 Իպպօլիտեայ ասեմ .

ՓԵՂՐԱ

Ո՛վ դէք .

ԵՆՈՆԷ

Խիստ կըշտամբանքս իցեն քեզ .

ՓԵՂՐԱՍ

Թըշուառական դու, որպիսի հաներ անուն ի բերանոյ :

ԵՆՈՆԵ

Կարի իսկ քաջ . իրաւացի է քեզ բըրդեւ ի բարկութիւն .
 Քաղցր ինձ լըսել ըզհառաչանըս քո ժանտի անուանն ի լուր .
 Կեցջիր ապա, յորդորեսցեն եւ սէր ըզքեզ եւ պարտք ի կեալ .
 Կեցջիր եւ մի հանդուրժեր զի սկիւթուհւոյն ճետ անտոհմիկ
 Դըժպըհի իշխանութեամբ ընկճեալ զորդիս քո ընդ իւրեւ ,
 Հրամայեսցէ ելլադական եւ դիցասերմըն վեհ արեան :
 Մի յապաղեր , զի սպանանէ ըզքեզ վայրկեան իւրաքանչիւր .
 Փութասջիր ի կազդուրել ըզզօրութիւն քոյին նուաղեալ ,
 Մինչ առկայծէ դեռ բոց կենաց քոց եւ կարէ արծարծանել :

ՓԵՂՐԱՍ

Մեղապարտ կենաց իմոց յոյժ իսկ ետու ցարդ երկարել :

ԵՆՈՆԵ

Եւ զիսորդ , իցէ թէ խիղճ քո զքեզ իւիք հարկանիցէ .
 Ո՞ր ոճիր ածէ աղմուկ ի քեզ այդքան դըժոխըմբեր .
 Մի թէ ձեռք քո , տիկին , յարիւն անսպարտ շաղախեցան :

ՓԵՂՐԱՍ

Գոհութիւն դից , չեղեն երբէք ձեռք իմ չեղեն եղեռնաւորք ,
 Այլ իցիւ եւ սիրտ իմ գոյր հանգոյն նոցին անպարտական :

ԵՆՈՆԵ

Զ՞որ դըժընդակ երկնեալ չարիս , ընդ որ դեռ սիրտ քո զարհուրի :

ՓԵՂՐԱՍ

Հերիք իսկ ասացի , դու ըզմնացորդն ինձ խնայեսջիր .
 Մեռանիմ զի մի զդըժնեայն աղէտ եղէց խոստովան .

ԵՆՈՆԵ

Մեռիր ապա , ի խուժադուժդ յայդ յամառեալ ի լըռութիւն ,
 Այլ խընդրեսջիր դու ձեռն այլ որ փակեսցէ զաչքս քոյին :
 Թէպէտ հազիւ աղօտ ինչ լոյս բոցոյ կենացըդ նըշողէ ,
 Այլ ես յառաջ իսկ քան ըզքեզ իջից ի ստուերըս մահու .
 Բիւր անդր ուղիք ածեն միշտ բացք , ցուցցէ ըզսուղն ինձ վիշտ ար-
 Ե՞րբ իսկ քեզ , ո՞ անողորմ , երբ իսկ եղէ հաւատադրուժ . [գար .
 Խորհեաց զի ձեռք իմ ընկալան ըզքեզ ի դաւքո ի լոյս .

Թողի զերկիր իմ եւ զորդիս Թողի ըզբնաւ ինչ վասըն քո .
Զայս դու ինձ վարձ հաւատարիմ ծառայութեանքս պահէիր :

ՓԵՂՐԱՍ.

Եւ որում օգտի յայդքան բըռնութենէ ակն ունիցիս .
Հեծեծեսցես զարհուրանօք եթէ լուծից ըզլուութիւն :

ԵՆՈՆԷ

Ո՛վ գիրք , եւ զինչ իսկ ասիցես երբէք հանգոյն զարհուրանաց
Տեսանելոյ զքեզ յանդիման աչաց իմոց անշընչացեալ :

ՓԵՂՐԱՍ.

Եթէ զօճիր իմ գիտիցես եւ որ ընկճէն զիս նըսեհ ,
Ոչ ինչ ընդհատ մեռայց այնուիկ , մեղապարտ եւս յայնժամ մե-

[ռայց :

ԵՆՈՆԷ

Վասն արտասուաց իմոց , տիկին , զոր ի պատճառքս քո հեղի ,
Վասըն ճընգացող լքեւոց՝ զորովք փարիմս ողջագուրեալ ,
Բարձ ի մըտաց իմոց ի բաց ըզտարակոյսըդ դժժընդակ :

ՓԵՂՐԱՍ.

Եւ զի կամիս զայդ , յոտըն կաց .

ԵՆՈՆԷ

Խօսեաց , ի լուր կամ աւասիկ :

ՓԵՂՐԱՍ.

Երկինք , եւ զինչ կայ ինձ ասել դըմա , ուստի՞ սկըսանիցիմ :

ԵՆՈՆԷ

Մի ինձ տիկին , մի յաւելուր ինձ վիշտ ահիւ քոյով սնտեալ :

ՓԵՂՐԱՍ.

Ո՛վ զայրոյթ դառնաղէտ , ո՛վ վրէժխընդիր քէն Աստղեկան .
Ի վրիպակ որպիսի՞ զառածեցոյց ըզմայր իմ սէր :

ԵՆՈՆԷ

Ի մոռացօնս արկցուք , տիկին , եւ առյապապս առհասարակ
Լըռութիւն յաւերժական արասցէ զայդ անյիշատակ :

ՓԵՂՐԱՍ.

Որպիսեան սիրով հարեալ , ո՛վ քոյր իմ իմս Սրիադնէ ,

Մեռար ի ծովափունս անդ ուրանօր էիր լըքեալ :

ԵՆՈՆԻ

Ձի՞ դու , տիկին , զի՞ գործես , եւ ո՞ր տաղտուկ դըժոխումբեր
Ըզքեզ սերկեան ընդդէմ արեան քօ զինուորէ բոլորեցուն :

ՓԵՂՐԱ

Եւ զի այս կամք են Աստղեկան , աւաղելոյ ազգատոհմին
Հէք քան ըզքնաւս եւ թըլուառ մեռայց ապա յետինըս ճետ :

ԵՆՈՆԻ

Սիրե՞ս թերեւըս դու զոք .

ՓԵՂՐԱ

Մոլեգնեալ իսկ եմ ի սիրոյ :

ԵՆՈՆԻ

Ի սիրոյ ո՞ր .

ՓԵՂՐԱ

Ըզլըբումն իսկ արհաւրաց լուիցես դու արդ .
Սիրեմ ես ... դողումն անունն ինձ դառնաղէտ ածէ , սոսկամ .
Սիրեմ ...

ԵՆՈՆԻ

Եւ զո՞ .

ՓԵՂՐԱ

Չամագոնեանըն ճանաչես դու ըզգաւակ ,
Չարքայազնըն հալածեալ երբեմն յինէն ընդերկար :

ԵՆՈՆԻ

Չիպպոլիտ , ո՞ անմահ դիք .

ՓԵՂՐԱ

Դու իսկ ըզնա անուանեցեր :

ԵՆՈՆԻ

Արդարադատ երկինք , արիւն ի յերակունս իմ պաղի :
Ո՞վհատութիւն , ո՞ սճիր մեծ , ո՞վ ազգատոհմ աւաղելի .
Նաւարկութիւն չարաբաստիկ , աղիտաբեր ծովեզերք ,
Պարտէր քերեւ իսկ երբէք ըզվտանդաւոր ափամբս այսուիկ :


ՓԵՒՐԱ

Եւս ի հեռուստ , Ենոնէ , ըսկիզբն աղէտք շարեացս առնուն .
Այն ինչ եգեան զաւակին տըւեալ իմ աջ ի հարսանիս ,
Ամրակառոյց ինձ կայկայեալ թըւէր հանգիստ իմ եւ նըսեհ .
Յուցին Աթէնք ինձ յայնժամ ըզթըշնամին իմ ըզգոռող .
Տեսի ըզնա , եւ յերեսաց նորա եղէ շառագունեալ .
Այլայլեցան դէմք իմ , յարեաւ աղմուկ ի սիրտ իմ յիմարեալ .
Խաւարեցան աչք իմ , ոչ եւրս բարբառել ինչ կարացի .
Յըրտասառոյց եւ բոցակէզ ըզգայի զանձն իմ բովանդակ .
Ծանեայ զԱստղիկն յայնժամ եւ զհուր նորին ծանեայ հիազար .
Ի վըէժ անհրաժեշտ հալածելոյն յիւրմէ արեան : [հուր ,
Շիջուցանել զայն կարծէի յուխտ եւ յաղերս հանապազորդ .
Կառուցի նըմա մեհեան , եւ ինամ կալայ շըքեղել զայն .
Շըրջապատեալ միշտ ի զոհից՝ խընդրէի զմիտս իմ զառանցեալս
Ի յընդերաց նոցին ի հմայս . անբոյժ սիրոյ դեղք ապիկարք :
Զուր ի բագինս անդր արկեալ խունկ եւ կարդայի ըզդիցուհին .
Պաշտէի զԻսպոլիտ , եւ ի տեսիլ նորին ըստէպ
Առ բագնօք իսկ որ ինեւըն ծըխէին՝ ձօնէի
Բոլորանուէր դիցն այնմիկ , զոր չիշխէի բնաւ անուանել :
Խոյս յերեսաց նորա տայի ուր եւ դէպ տայր եւ գտանէին ,
Ծայր աղետից , աչք իմ ըզնա ի կերպարանսըն հայրենի :
Իշխեցի ի վերջէ ընդդէմ անձին ի պատերազմ ,
Խրախոյս անձին տալ հալածել վանել զոսոխն իմ սիրեցեալ :
Ըզմօրուի անիրաւի կեղծաւորեալ գըրգիռս ի յիս ,
Ըստիպեցի զաքսոր նորին , եւ ի բողոք անլըռելի
Ի հայրենի ծոցոյ ետու խըլել ըզնա եւ ի գըրկաց :
Հանգեայ յայնժամ , Ենոնէ , եւ մինչեւ կայր նա ի բացեայ ,
Աւուրք իմ նուազ ալեկոճք անցանէին յանմեղութեան .
Հըպատակ առն իմուժ , ըզվիշտս իմ թագուցեալ ի նմանէ ,
Զաղիտարեր հարսանեաց նորա զարդիւնսըն տածէի :
Այլ ո՛վ զրաջան ըզգուշութիւնք , ո՛վ անողորմ ճակատապիր .
Յինքենէ իսկ ի յառնէ իմմէ ածեալ ի Տրեզնն ,
Տեսի զոսոխն իմ անդրէն՝ զոր տարագրել տըւեալ էր իմ .
Յայնժամ խոցուածն իմ կարեվէր բացաւ իսկոյն հոսել արիւն .
Ոչ եւս եռանդն այնուհետեւ գոյր յերակունս իմ դարանեալ ,
Այլ ինքն Աստղիկ զորս իւր ըզբռամբ ածեալ գրաւեալ բոլորովին :
Սոսկումն ընդ մեղս իմ երկնեցի , ատեցի զկեանս իմ յայնժամ .
Զարհուրեցայ ի բոցոյ անտի որ զիսըն տոչորէր .
Յանկայի եւեթ ըզփառս իմ ի մահու իմուժ խնամել ,
Եւ մի ածել յերեւան ըզբոցըն զայն տըխրատեսիլ .
Այլ արտասուք քո յաղթեցին ինձ , Ենոնէ , յոգնաթախանձք .

1949-2014

695

1465



Եւ խոստովան եղէ քեզ, եւ ստորջանամ իսկ ոչ ընդ այն .
 Բայց միայն զի ակն ածեալ քո մօտալուտ ի մահուանէս՝
 Մի ինձ վիշտըս տարապարտ կըշտամբանօք քովք յաւելցես,
 Եւ զկայ առցես ի ջանից արծարծելոյ անդրէն ի յիս
 Ըզմնացուածըս կենաց՝ որ ահա մերձ է ի սպառել :

ՏԵՍԻԿ Դ

ՓԵՒՐԱ, ԵՆՈՆԷ, ՊԱՆՈՊԷ

ՊԱՆՈՊԷ

Կամէի ծածկել ըզգոյժն ի քէն, այլ հարկ է ինձ տիկին
 Գուժել քեզ զայն . յափըշտակեաց մահ զայր քոյին անյաղժելի,
 Ոչ իսկ ուրուք բաց ի քէն զաղէտըս զայս անգիտացեալ :

ԵՆՈՆԷ

Ձի ասեօ, Պանոպէ .

ՊԱՆՈՊԷ

Ձայն զի ի խաբս եղեալ գըշտոյն
 Ձուր հայցէ զդարձ Թեսեայ ի դից . գիտաց որդին իւր իսպառլիս
 Ըզմահ նորա ի նաւաց ի ծովեզերս այսր հասելոց :

ՓԵՒՐԱ

Ո՛վ Դէք .

ՊԱՆՈՊԷ

Երկպառակեալ Աթէնք ընտրել իւրեանց տէր,
 Արքայազին որդւոյ քում կէսք ըզվարկ իւրեանց մատուցանեն .
 Այլք զօրէնս աշխարհիս ի մուացօնս արկեալ, տիկին,
 Որդւոյ օտարուհւոյն իշխեն քրէ արկանել .
 Համբաւի իսկ զի ստահակք ոմանք կամին զԱրիկիս
 Ձօրիորդ գուստրըն պալասեան կացուցանել ի գահոյս .
 Ձեկուցանել քեզ ըզվըտանգըն կարեւոր համարեցայ .
 Վաղ իսկ այժմէն կազմ եւ պատրաստ կայ իսպառլիս ի ծովաչու .
 Է իսկ երկիւղ, զի յերեւել իւր ի նորումըս մըրբրկի՝
 Ըզամիկն յեղլեղուկ առեալ ըզհետ իւր ձրգեսցէ :

ԵՆՈՆԷ

Պանոպէ, բաւ է ցայդ վայր . լուաւ գըշտոյն զամենայն,
 Եւ զկարեւորըդ զայդ լուր ոչ ինչ անփոյթ արասցէ նա :

ՏԵՍԻԼ Ե

ՓԵՂՐԱ, ԵՆՈՆԷ


ԵՆՈՆԷ

Ըզկայ, տիկին, առնուի ի ստիպելոյ ըզքեզ ի կեալ,
 Խորհէի իսկ իջանել ըզհետ քոյին ի գերեզման,
 Ոչ եւրս գոյր յիս բարբառ անտի ըզքեզ նըհանջելոյ .
 Այլ աղէտք նոր քեզ այլ օրէնքս սահմանեն աստանօր .
 Յեղաշըրջեալ բախտ քոյին առնու այժմիկ կերպարան նոր .
 Աքքայ ոչ եւս է, տիկին, զաթոռ նորա պարտ է ունել .
 Քեզ մահ նորա թողու որդեակ՝ որում դու զանձըն քո պարտիս .
 Լիցի նա սարուկ թէ մեռանիս, թագաւորէ եթէ կեցցես .
 Առ ո՞ յարկածըս բախտին, առ ո՞ կամիս զի դիմեսցէ,
 Չիցէ իսկ ձեռն այնուհետեւ՝ որ զարտասուս իւր սըրբեսցէ,
 Եւ ճիչք անմեղին մինչեւ յերկինքս ժամանեալ
 Ըզհաւուցն իւրոց զայրոյթ հակառակ մօրըն դըրդեսցեն .
 Կեաց, զի չըմնայ ինչ քեզ անձին այսուհետեւ ըստգրտանել .
 Բոցք որ ի քեզ է սիրոյ՝ փոխի ի բոց ընդելական .
 Թեսէոս մահուն իւրով ըզհարսանեաց խըզեաց ըզզօդ,
 Որով եւեթ հուրն այն ի սիրա քոյին սոսկումն էր եւ ոճիր :
 Ոչ եւրս քեզ իպպոլիտ որպէս երբեմն է ահարկու .
 Կարես ըզնա տեսանել ոչ լինելով քո մեղապարտ .
 Գուցէ զգացեալ խորշումն ի քեզ՝ կացցէ ի գլուխ աղմըկին .
 Բարձ ըզկարծիսըն ձախողակ, եւ ըզխրախոյս նորին ցածո .
 Բարեբաստից ափանցս արքայ, Տրեզեն նորին իսկ է վիճակ .
 Այլ չէ զանխուլ ի նմանէ զի որդեկի քում տան օրէնք
 Ըզպարիսպըս հոյակապս ըզդաստակերոս Աթենասայ :
 Երկաքանչիւր իսկ ձեզ ոսոխ է նա, եւ ոչ վայրապար .
 Աջակիցք ապա միմեանց լերուք ընդդէմ Արիկիայ :

ՓԵՂՐԱ

Քաջ է, հաճոյ է խրատ քո ինձ . կեցից թէ հնար իցէ ինձ կեալ,
 Եւ եթէ սէր մայրենի ի դառնաղէտ ժամանակիս
 Կարէ զնըւաղ ոգւոցս անդրէն արծարծանել ըզմնացուած :

ՀԱՆԴԻՍ ԵՐԿՐՈՐԴ



ՏԵՍԻԼ Ա.

ԱՐԻԿԻԱ, ԻՍՄԵՆԷ

ԱՐԻԿԻԱ

Իսմենէ, ճըշմարտիւ ասիցես զայդ, չիցես խաբեալ .
կամիցի՞ արդարեւ իպպոլիտ այց առնել ինձ աստ,
Խընդրիցէ՞ զիս իպպոլիտ առ ի հրաժեշտ առնուլ յինէն:

ԻՍՄԵՆԷ

Մահուն թեսէոսի այդ արգասիք են նախընծայ .
Լէր դու պատրաստ, դուստր արքայազն, ի տեսանել ամենուստ
Թռուցեալ ի սէր քոյին ըզսիրտս առ ի թեսեսայ մերժեալս ի բաց .
Աստ ուրեմն Արիկիա տէր է իւրումըն բախտի,
Եւ տեսցէ ընդ հուպ առ ոտըս զԵլլադա առ հասարակ:

ԱՐԻԿԻԱ

Չէ ուրեմն, Իսմենէ, չէ ինչ համբաւ վարկաբարազի .
Ո՛չ եւս իցեմ ես ըստրուկ, ո՛չ եւս իցեն ինձ թըշնամիք:

ԻՍՄԵՆԷ

Ոչ, օրիորդ արքայազն, ոչ եւրս դիք են քեզ ոստիք .
Յաւելաւ ահա ի ստուերս եղբարցըդ քոց եւ թեսէոս:

ԱՐԻԿԻԱ

Պատմի՞ որովք արկածիւք զբաւեալ իցէ նա ի կենաց:

ԻՍՄԵՆԷ

Չհաւատալիք ըզմահուանէ նորա զըրոյցք համբաւին .
Ասեն ալեաց ընկլուզեալ ըզնա, զփեսայն հաւատադրութ,
Ի դառնալ նորա զսյլ ոմն ի սիրուհեաց առեւանկեալ .
Ասեն եւս, եւ ամենայն ուրեք զըրոյցս այս հըռչակի,
Ի դըժոխս իսկ անդր ըզնա Պիրիթովաւ հանդերձ իջեալ,
Ըզկոկիտոն եւ զգետեղերս անդ նըկատեալ խաւարարգելս,

Երեւելով կենդանւոյն ուրուականաց դըժոխայնոց .
 Այլ ոչ եւրս կարացեալ ելա ի տըխուր բանտէն գտանել,
 Եւ ոչ վերըստին գառնալ այսրէն ընդ հունն անդարձ :

ԱՐԻԿԻՍ.

Հաւատացից երբէք զի ոք ի մահացուաց նախ քան զօրհաս
 Մըտանել կարիցէ ի ստորաբնակ կայս մեռելոց ,
 Եւ ո՞ր հրապոյրք ըզնա յեզերս անդր ասարկուս հրաւիրէին :

ԻՍՄԵՆԷ

Մեռեալ իսկ է Թեոսէոս , դու եւ եթ զայն յերկբայս առնես .
 Աթէնք լան , Տրեզեն ի լուր մահու նորին վաղ իսկ կացոյց
 Զիպպոլիտ իւր Թագաւոր . եւ խրատ ասիւ զօրդւոյ իւրմէ
 Աստ յարբունիս իւր ի խռովեալ բարեկամացն հայցէ Փեդրա :

ԱՐԻԿԻՍ.

Եւ դու կարծես զի Իպպոլիտ մարդասիրեալ քան ըզհայր իւր ,
 Թեթեւեսցէ զիմ շողթայս՝ կարեկցելով ընդ աղէտս իմ :

ԻՍՄԵՆԷ

Կարծեմ , տիկին .

ԱՐԻԿԻՍ.

Ճանաչիցես զանկարեկիրն Իպպոլիտ .

Եւ ո՞ր քեզ յոյս է սնտտի զի կարեկից լիցի նա յիս ,
 Եւ յիս եւ եթ ակն ածիցէ ազին՝ զոր բնաւ իսկ խոտէ .
 Տեսանես իսկ ի քանի՞ ժամանակաց խորշի ի մէնջ ,
 Եւ խընդրէ գեգերել ուր եւ ուրեք չիցեմքըն մեք :

ԻՍՄԵՆԷ

Գիտեմ իսկ քաջ որ ինչ ճառք ըզհովու Թեանց նորա պատմին .
 Այլ առաջի քո ըզգոռողըն զայն տեսի ես զիպպոլիտ ,
 Եւ յաւելան յիս յերեսաց նորա յայնժամ իղծք հետազօտք
 Ի տես խրոխտանացն ըզնըմանէ համբաւելոց .
 Այլ ոչ ըստ համբաւոյն ինձ կերպարան իւր Թըւեցաւ .
 Ընդ ակնարկելքո ի նա տեսի զերեսըս իւր խռովեալ ,
 Աչք իւր , որ զուր խընդրէին խոյս տալ յերեսաց քոց ի բաց ,
 Նուաղեալ անդէն եւ անդ ոչ եւս ունէին ժոյժ Թողուլ ըզքեզ .
 Թերեւս ամօթ իւր համարի արին զանուն տարփաւորի .
 Այլ Թէ զբարբառ նորին ոչ , սակայն բերէ զաչըս նորին :

ԱՐԻԿԻՍ

Քանի՛ ըղձիւք, իմն իսմենէ, սիրտ իմ բերի բանիցդ ի լուր,
 Որոց չիցէ իսկ եւ ոչ թերեւ չիմն հաստատութեան.
 Քեզ՝ որ քաջիկըդ ճանաչես զիս, թըւիցի՛ հաւանելի,
 Զի սիրտ իմ լեալ անագորոյն բախտին տըխուր խաղալիկ,
 Եւ սընեալ հանապազ ի դառնութիւն եւ յարտասուս,
 Ծանիցէ նա ըզտարփանս եւ զխօլ աղէտըս նորին.
 Ճետ արքայազըն վեհազինըն Գեմետրեան զաւակին,
 Միայնակ ի մոլեգին կոտորածէ մարտին զերծեալ,
 Կորուսի եղբարըս վեց ըզյոյս գիւցազն ազգատոհմին
 Ի ծաղկի տիոց նոցա. հընձեաց երկաթ զամենայն.
 Եւ զԵրեքթեայ թոռանցն արիւն արբ գըժկամակ երկիր նամէտ.
 Գիտես իսկ քաջ զի յետ մահու նոցա օրէնք որպիսի խիստ
 Հեւեանաց բոլորեցուն շներեն անձկալ ինձ՝ թէ գուցէ
 Յանդուզն ի բոց սիրոյ քեռ աճիւն եղբարցն արծարծեսցի.
 Այլ գու զայն եւըս գիտես զի զկասկածոտ յաղթականին
 Որպիսեաւ արհամարհոտ ալամբ ըզհոգ տեսանէի.
 Գիտես իսկ եթէ ռոպէս ըզդէմ կալեալ միշտ ըզսիրոյ
 Շընորհս անիրաւին թեսեայ յաճախ ունէի,
 Ոյր խըստութիւն բարեպատեհ զարհամարհանս իմ յաջողէր.
 Զեւ եւս յայնժամ տեսեալ էր իմ, չեւ յակն արկեալ զորդի նորին.
 Իբր ոչ եթէ ի հրապուրանս աչաց եւեթ վատօրէն
 Ըզգեղ ի նմա սիրիցեմ եւ զգըրուատեալն այնքան ըզշորհս՝
 Իւ ճոխացոյց ըզնա բնութիւն ձըրիւք զորս ինքն իսկ անտեսէ,
 Զորըս գոզցես անգիտանայ, այլ սիրելի ապաքէն
 Եւ մեծարոյ ազնըւագոյնքն ինձ որ ի նըմայն են ճոխութիւնք,
 Լաուութիւնքըն հայրենիք, ոչ հայրենի տըկարութիւնք:
 Սիրելի ինձ, ոչ ժըխտեմ, խրոխտումն ի նմա ազնըւական
 Ոչ ամենեւին ընդ տարփանաց լըծովն ընկճեալ.
 Քան ըզՓեգրա՝ որ ի յանձուկ թեսէոսի սնապարծէր՝
 Նազիմ ես սէգ, եւ հրաժեշտ ի դիւրաստաց փառացըն տամ
 Զըգեւոյ յիս զըսպասըս մատուցեալս յոգունց այլոց,
 Եւ մուտս ի սիրտ՝ որ ամենուստ դիւրամատոյցն է՝ գտանելոյ.
 Այլ խոնարհեւ նուաճեւ ի սէր զարիութիւն անընկճելի,
 Այլ ի սիրտ անըզգայ ազդեւ աղէտ, եւ ըմբըռնել
 Գերի նդ շըղթայս իւր հիացեալ, եւ ի նանիր նըշկահեալ
 Ըզլուծ՝ որ քաղցր է ինքեան, այսմ ըղձանամ, յայս նըկըրտիմ:
 Դիւրագոյն քան զիսպոլիտ էր զէնընկէց զԵրակլ առնել,
 Որ պարտեալ յաճախագոյն եւ որ վաղ եւըս նըւաճեալ
 Ոչ այնպիսի պատրաստէր փառս՝ որոց ըզնայն նըւաճէին.
 Այլ աւանդ, զի քանի՛օն գըտանիցիմ ես անխոհեմ

Ի զդէմ ունել նորա ինձ . մինչ ամօթով հեծեծեցից
 Թերեւս յաղէտս իմ ընդ խրոխտումն ընդ որ այժմիկ հիացեալ
 Իցէ երբէք , իմս Իամենէ , թէ սիրիցէ Իպպոլիտ . [կամ .
 Ո՞ր բախտ չըքնաղ յաջողեսցէ ինձ խոնարհել ըզնա ի սէր...

ԻՍՄԵՆԷ

Աւասիկ գայ նա , ընդ նըմին իսկ խօսակից լեալ լուիցես :

ՏԵՍԻԼ Բ

ԻՊՊՈՒԻՏ , ԱՐԻԿԻՍ , ԻՍՄԵՆԷ

ԻՊՊՈՒԻՏ

Մինչչեւ մեկնեալ , դուստր արքայազն , համարեցայ պարտ անձին
 Ազդ առնել քեզ ըզբախտ քոյին . հայր իմ ոչ եւս է կենդանի ,
 Գուժէր ինձ խէթ իրաւացի զվասնէր դարձին իւր յամելոյ .
 Մահու եւեթ մարթէր ծածկել ըզնա այսպէս ընդ երկար ,
 Զարուժիւնըս նորա աշխարհալուրս ոտնակառեալ :
 Ըսպանողին Պարկայ ի ձեռս յետոյ ուրեմըն լըքին դիք
 Զընկերն եւ զմըտերիմ եւ ըզյաջորդն Ալկիդեայ .
 Քէն քո խնայեալ , ոչ երկբայիմ , ի լաւութիւնըս նորին՝
 Ոչ դըժկամակ լիցի ի լուր անուանց որ անկ են նըմին :
 Յոյս մի եւեթ ըզտըրտմութիւն իմ ամոքէ զմահառիթ ,
 Զի կարեմ բառնալ ըզխիստ որ ըզքեւ պահ ըզգուշութեան ,
 Եւ խափանել զօրէնս ոյր ինձ դըժոխըմբեր է խըստութիւն .
 Տէր ես անձին քում եւ սըրտի , եւ ի Տրեզեն վիճակ իմ արդ
 Այն որ երբեմն էր Պիթեայ հաւոյն իմոյ ժառանգութիւն ,
 Եւ որ առանց երկմըտութեան ընկալաւ զիս ի թագաւոր ,
 Ահա ազատ ըզքեզ թողում , ազատագոյն եւըս քան զիս :

ԱՐԻԿԻՍ

Մեծ է ինձ յոյժ այդքան շընորհ , եւ ի տագնապ զիս արկանէ .
 Ըզհիքութիւն իմ այդքանեաւ առատաձիր խնամով պատուեալ ,
 Առաւել քան զոր խորհիսըդ , տէր , այդուիկ դու զիս նուաճես
 Ընդ խիստ օրինօքն՝ յորոց կամիսդ ազատել զիս :

ԻՊՊՈՒԻՏ

Աթէնք յերկբայս տատանեալ վասն ընտրելոյ զոք ի յաջորդ ,
 Խօսին ըզքէն , խօսին զինէն , եւ զմանկանէ իսկ դըշխոյին .

ԱՐԻԿԻՍ.

Եւ զինէն տէր :

ԻՊՊՈԼԻՏ

Գիտեմ, եւ ոչ կամիմ տեղի տալ շողովից ,
 Զի օրէնք ամբարհաւաճք թըլին առնել զիս տարագիր ,
 Ի նախատինս ինձ Ելլադա համարի զմայր անաշխարհիկ .
 Սակայն թէ չէր ինձ ոք , տիկին , այլ ոք ոսոխ բաց յեղբօրէ ,
 Զինուորէին ընդդէմ նորին ինձ իրաւունք անժխտելիք ,
 Զորքս մարթէր ինձ ճողոպրել յըստ հաճոյիցն օրինաց .
 Այլ առաւել օրինաւոր նուաճէ սանձ զիմս ամեհութիւն .
 Թողում ի քեզ , նա աւանիկ դարձուցանեմ ի քեզ ըզգահ
 Եւ զգաւազան՝ զոր ի վաղուց հետէ եթող հաւուց քոյոց
 Գերահըռչակըն մահացուաց՝ զոր մայր Երկիր էած ի լոյս :
 Որդեղբու թիւն ընդ ձեռամբ Եգէոսի կացոյց ըզնա ,
 Եւ ի հօրէ իմմէ Աթէնք բարգաւաճեալ եւ պաշտպանեալ
 Ընկալաւ հրրճուանօք զարքայն այնքան իւր բարերար ,
 Ի մուացօնս թողեալ զչարաբաստիկ եղբարքս քո :
 Աթէնք ըզքեզ արդ ի պարիսպս իւրեանց անդրէն հրաւիրեն .
 Շատ իսկ ցարդ հեծեծեցին երկարաձիգ աշխարանօք . [զայն .
 Շատ իսկ ծըխեաց , արեամբդ ակօսք իւր ողողեալ , դաշտ որ ետ
 Տրեզնն հնազանդ է ինձ , եւ դաշտք կըրբտականք մատուցանեն
 Որդւոյն Փեղբայ հանգրըւան ճոխ , քո է երկիր ատտիկաստան .
 Մեկնիմ , եւ զիզմս հերձեալս ի մեզ երթամ ի նպաստ քո գու-
 [մարել :

ԱՐԻԿԻՍ.

Ի լուր բանից քոց այդոցիկ յապուշ եղեալ եւ խռովեալ ,
 Յանըրջականքս կասկածեմ գողցես յուզեալ զիս ի պատրանս .
 Եւ իցեմ ես յարթմընի , եւ կարիցեմ ինչ հաւատալ
 Խորհրդոյ այդպիսւոյ . ո՞ ի դից , տէր , ազդեաց քեզ զայդ .
 Քանի յիրաւի ծաւալեալ փառք քո համաստիւռ ,
 Եւ քանիօն գեր ի վերոյ արդիւնք իրին քան ըզհամբաւ .
 Կամիցին անձին վասն իմ գու մատընտու . չէր իսկ հերիք
 Զի չատեցեր զիս ցարդ ուրեմըն զերծ կացեալ ի մախանաց...

ԻՊՊՈԼԻՏ

Ինձ , արքայազն օրիորդ , ատել ըզքեզ . որ ինչ ումեք
 Եւ որպիսի խրոխտումն ի յիս հաճոյ թուեցեալ նրկարագրել ,
 Սակայն ուրուք ի հրէշնց իցէ կըրբեալ զիս ի ծոցի ,
 Ո՞ր բարք վայրենի եւ ո՞ր յամառ ատելութիւն
 Ոչ անդէն ի տեսանելն ըզքեզ զիջեալ ամօքեսցի .

Էր ինձ մարթ ըզդէմ ունել չըքնաղ գեղոյ . . .

ԱՐԻԿԻՍ

Եւ զինչ, տէր .

ԻՊՊՈԼԻՏ

Կարի յառաջ խաղացի, կիրք ահա բռունք յաղթեն մըտաց .
 Եւ զի սկըսայ արդ լուծանել, դուստր արքայազն, ըզլըռութիւն,
 Ոչ է ինձ պարտ ըզկայ առնուլ, պարտիմ յայտնել քեզ ըզգաղ-
 Զոր սիրտ իմ ոչ եւրս կարէ այսուհետեւ թագուցանել: [տնիս՝
 Տեսանես դու առ քեւ արքայորդի չարաբաստիկ
 Խորոխտ յանդըգնութեան յաւերժական լեալ օրինակ,
 Որ նըշկահեալ գոռողաբար ըզսէր, եւ ցարդ ընդերկար
 Ոտընհար լինէի ըզչըղթայիւք գերեաց նորին,
 Որ ըզտըկար մահկանացուաց աշխարէի զնաւակոծել՝
 Ի մտի եղեալ ի ծովափանց եւեթ գիտել միշտ ըզմըրրիկ,
 Ընդ օրինօք հասարակաց նուաճեալ այժմիկ՝ քանի՞օն
 Աղմուկ ի սիրտ՝ հեռի յինէն մերժեալ ի բաց տեսանեմ զիս .
 Վայրկեան եւեթ յաղթեաց իմումըս թերատես յանդըգնութե՛ն,
 Եւ աստ ուրեմն անձն իմ այնքան սէգ գըտանի գերի վարեալ:
 Իբր ի վեցից ամսոց հետէ ամօթապարտ եւ յուսահատ
 Կրելով յանձին ամենուրեք ըզնետ որ զիսըն կեղեքէ,
 Ի նանիր ընդգէմ քո եւ հակառակ ինձ նըկըրտիմ .
 Եթէ մերձ առ իս կայցես, խոյս յերեսաց քոց տամ ի բաց .
 Եւ ի բացեայ եթէ կայցես, ըզքեզ առ իս մերձ գըտանեմ .
 ✠ Խորս անտառաց պատկեր քոյին ըզհետ գայ ինձ .
 Լոյս արփենի եւ գիշեր նըսեմաստուեր ըզգեղըն զայն՝
 Յորմէ խուսեմ՝ յանդիման առնեն աշաց իմոց, եւ բնաւք
 Ելեւելս առնեն մատնել քեզ զապըստամբըն զիսպոլիտ:
 Եւ զուր ջանիցս արգասիք, ես ինքն եղեալ ինձ ի խընդիր՝
 Ոչ եւրս զիս արդ գըտանեմ. աղեղն եւ տէգ ինձ եւ կառք
 Ծանուր են բնաւք. ոչ եւս ի յուշ ինձ անկանին վարժք պիսի-
 Ի հառաչանս իմ եւեթ հընչեն անտառք, եւ մոռացան [դեանք .
 Ըզձայն իմոց խրախուսանաց ձիանն իմ արդ անվերելեակք:
 Այսպիսուոյ թերեւըս վէպք վայրագ սիրոյ տացեն կըրել
 Քեզ ընդ արդիւնըս քո ի լուր բանից իմոց շառագունանս .
 Քանի դըժնեայ զըրոյցք սըրտի որ քեզ ձօնեալ բողորանուէր .
 Գերի քանի նորանըշան առ այսպիսի զօդ գեղանի .
 Այլ առաւել քեզ հաճոյ պարտի նըւէրս այս պատահել .
 Ըզմըտաւ աճ իբր ի բարբառ օտարոտի ընդ քեզ խօսիմ,
 Եւ մի մերժեր դու զիղձս ի բաց, զի ոչ ի ճահ բացատրեալ,
 Զորըս չէր մարթ իսպոլիտեայ երկնել առանց քո ի սըրտի:

ՏԵՍԻԼ Գ

ԻՊՊՈԼԻՏ, ԱՐԻԿԻԱ, ԹԵՐԱՄԵՆ, ԻՍՄԵՆԷ

ԹԵՐԱՄԵՆ

Ահա դըշխոյն այսր ի խընդիր քո, տէր իմ, գայ. կանխեցի ես .

ԻՊՊՈԼԻՏ

Ի խընդիր իմ.

ԹԵՐԱՄԵՆ

Չգիտեմ առ ի՞նչ, այլ յըղեաց նա դքէն հարցանել .
Մինչ չեւ մեկնեալ քո աստի՛ կամի խօսել ընդ քեզ Փեղրա :

ԻՊՊՈԼԻՏ

Փեղրա՞, եւ զի՞նչ ասել իցէ ինձ նրմա, ի՞մ մընայ յինէն : . . .

ԱՐԻԿԻԱ

Այլ ոչ է մարթ քեզ հրաժարել ի լրսեւոյ նրմա տէր .
Թէպէտեւ ստոյգ գիտիցես զի թըշնամի է նա ընդ քեզ,
Արտասուաց նորա սլարտիս շնորհել ըստուեր ինչ գըթու թեան .

ԻՊՊՈԼԻՏ

Այլ դու ի բաց ելանես. մեկնիմ եւ ես, եւ ոչ գիտեմ
Թէ գործիցեմ ինչ անախորժ գեղոյն յինէն սիրեցեւոյ .
Ոչ գիտեմ զի զոր ի ձեռքս քո թողում ըզսիրտքս զայս . . .

ԱՐԻԿԻԱ

Մեկնեաց, տէր, կատարել զազնըւական խորհուրդքս քո .
Իմումս իշխանութեան կացո զԱ.թէնքս հարկատու .
Ընդունիմ ըզպարգեւս որ ինչ եւ կամք են քեզ տալ ինձ .
Այլ պետութիւնդ այդ այդպիսի մեծ եւ այդքան փառաւորեալ
Չէ ինձ եւ չէ սիրելագոյնն ի պարգեւացըդ քոյոց :

ՏԵՍԻԼ Դ

ԻՊՊՈՒԻՏ, ԹԵՐԱՄԵՆ

ԻՊՊՈՒԻՏ

Սիրեցեալդ իմ՝ Թերամեն, կազմ եւ պատրաստ է ամենայն .
Այլ հասանէ դըշխոյն . երթ ճեպ տուր զինուորել բնաւից ի չու-
նըշան խակոյն տացի չըւոյ . ընթա , պատուէր տուր , եւ դարձիր
Վախճան առնել վաղագոյն խօսակցութեանըս դըթպըհւոյ :

ՏԵՍԻԼ Ե

ՓԵԴՐԱ, ԻՊՊՈՒԻՏ, ԵՆՈՆԷ

ՓԵԴՐԱ, Ի ԽՈՐԱ ԴԵՄԱՐԱՆԻՆ ԱՌ ԵՆՈՆԷ

Նա ինքն ահա . արիւն ի սիրտ իմ յետս ընդդէմ նահանջի .
Մոռացօնք խօսելեացս ինձ յերեսաց նորա լինին :

ԵՆՈՆԷ

Յուշ լիցի քեզ որդեակըն քո , որոյ ի քեզ եւ եթ է յոյս :

ՓԵԴՐԱ

Լըսեմ զի նդ հուպ մեկնիս ի մէնջ . ի սուգ քոյին , արքայորդիդ ,
Գամ յաւելուլ զարտասուս իմ , գամ քեզ յայտնել զաղմուկ սըր-
վասն որդեկին իմոյ ոյր չիք ոչ եւըս հայր , եւ չէ հեռի [տիս
Օրն որ մահուն իսկ իմոյ ականատես կացուցէ զնա .
Այժմէն իսկ ի վերայ մանկանըն բիւրք յարձակին հէնք .
Դու միայն ընդդէմ նոցա կարես պաշտպան կալ նըմին .
Այլ ի խիղճ գաղտնաձածուկ սիրտ իմ հարեալ խոցօտի .
Կասկածեմ ըզլըսելիս քո առ բողոք նորին փակեալ .
Զահի հարեալ կամ թէ գուցէ ցասումըն քո իրաւացի
Ըզմօր ատելոյ առցէ ընդհուպ ի նմա ըզվրէժ :

ԻՊՊՈՒԻՏ

Չեն իսկ եւ չեն յիս այդպիսիք , տիկին , իմաստք վատութեան :

ՓԵՒՐԱ

Թէ ատէիր իսկ զիս , տէր , ոչինչ ըզքէն դանգատէի .
 Տեսեր դու զիս լեալ ջանահնար առ ի գործելքեզ վընաս ,
 Այլ չէր քեզ մարթ ըզսըրտի իմոյ ըզխորըս տեսանել .
 Եղէ անձնանըւէր առ ի լինելքեզ թըշնամի ,
 Չէր ինձ մարթ ներելքեզ կալ ի ծովափունս ուր բնակէի .
 Յայտնի եւ ի ծածուկ հակառակորդ քեզ կացեալ ,
 Գուն գործեցի զի ի միջի մերում կացցէ ծով անջըրպետ .
 Խըստիւ զանուն քո արգելի չիշխել ի լուր իմ տալ ումէք .
 Այլ թէ 'ստ մեղաց կըշուի սլատիժ , եւ հեռ եւեթ եթէ զքոյին
 Յանձըն ձըդել կարէ ըզհեռ , չիք ոք երբէք չիք ի կանանց
 Քոյումըդ գըթութեան լեալ առաւել արժանի ,
 Եւ ոչ քոյումըդ , տէր , նըւազ լեալ արժանի թըշնամութեան :

ԻՊՊՈԼԻՏ

Դուն ուրեք մայր , իրաւանց որդւոց իւրոց նախանձաւոր ,
 Ներէ որդւոյ այլոյ հարսին , գիտեմ տիկին . կասկածք դըժնեայք
 Երկրորդի հարսանեաց սովորագոյն են արդասիք .
 Ո ոք եւ էր , ըզնոյն յանձին բերէր զինէն երկեւան .
 Եւ առաւել թերեւս յայլմէ մընայր կըրել ինձ թըշնամանս :

ՓԵՒՐԱ

Ո՛հ , տէր , զիարդ երկինք , զոր ինձ ի վկայութիւն իշխեմ կարդալ ,
 Յօրինաց աստի հանուրց ի բաց առնուլ զիս կամեցան .
 Իբր այլօրինակ խռովեն զիս հոգք եւ սպառեն :

ԻՊՊՈԼԻՏ

Չեւ եւս է ժամ քեզ խռովելոյ , դըշխոյ տիկին , ո՛ գիտէ
 Չի տեսանէ իսկ տակաւին այր քո թերեւըս զարեւ ,
 Եւ կարեն երկինք ըզդարձ իւր արտասուաց մերոց շնորհել .
 Պիսիդ պաշտպան է հօրն իմում , եւ ոչ երբէք ի նանիր
 Լիցի նըմա կարդալ ըզդիս անձին իւրոյ խնամակալ :

ՓԵՒՐԱ

Ըզդըժոխոց չիք ումէք , տէր , զափունս երկիցըս տեսանել .
 Գամ մի զգետափնըն զայն տեսեալ Թեսէոսի զխաւարչտին ,
 Ի զուր յուսաս զի ոք ի դից ըզնա առ քեզ դարձուցէ .
 Չի ոչ ագահն Ախերոն երբէք զաւար իւր լըքանէ :
 Չինչ իսկ ասեմ , ոչ է մեռեալ նա , կենդանի է ի քեզ .
 Յար յանդիման աչաց իմոց թըլի ինձ զայր իմ տեսանել .
 Հայիմ ի նա , խօսակից լինիմ , եւ սիրտ իմ . . . տէր , ցնորեմ .
 Եռանդըն խօըական յիս յակամայս իմ գայ ի յայտ :

ԻՊՊՈԼԻՏ

Նորանըշան արգասիս սիրոյ յանձին քում տեսանեմ .
 Թեսէոս թէպէտ մեռեալ՝ դեռ կայ աչաց քոյ յանդիման ,
 Եւ ի սէր նորին վառեալ սիրտ քո դեռ եւ ըս բորբոքի :

ՓԵՂՐԱ

Այո՛ արքայորդիդ , նուաղիմ այրիմ ի սէր Թեսէայ .
 Սիրեմ ըզնա , ոչ որպիսի տեսին ըզնա սանդարամետք ,
 Յեղյեղուկ երկըրպագու յոգունց ազգի ազգի էից ,
 Որ զառագաստ դից դըժոխոց երթայր առնել անփառունակ ,
 Այլ անկեղծիկ , այլ գոռոզ , այլ սակաւիկ ինչ եւ վայրագ ,
 Գեղանի , պատանեակ , սըրտից բնաւից յինքն յանկուցող ,
 Որպիսի դիք մեր նըկարին , որպիսի գքեղդդ նըկատեմ :
 Ըզքոյդ բերէր նա ըզշարժուած , զաչկունըս քո եւ ըզբարբառ ,
 Դոյն պատկառանք ազնըւական ըզկերպարան իւր երգունէր
 Յանցըս նորին ընդ ալիս մերոյս կրետայ սաղապաճեմ ,
 Դըստերացըն Մինովայ սիրատարփիցն արժանաւոր :
 Զք գործէիր դու յայնժամ , ընդէր առանց Խպպոլիտեայ
 Նա զգիւցազանցն Ելլադայ զընտիր ընտիրըս գումարէր .
 Ընդէր , մանկիկ դեռ եւս յայնժամ , ոչ կարացեր դու մտանել
 Ի նաւափայտն որ ըզնա ի ծովեզերըս մեր էած ,
 Քեւ արդեօք ի կորուստ մատնէր հըրէշն այն կրետական
 Ի լայնատարըր խըշուոյն ի պատ ի պատ հիւրս բունեալ .
 Քոյր իմ յայնժամ առ ի զտագնապըն լուծանել կեղակարծ ,
 Ըզքոյդ արդեօք զինուորէր ճակատագրեալ թելիւ ըն զաջ :
 Այլ էր իսկ նա . ի նոյն ի հնարըս կանխէի ես քան ըզնա ,
 Սէր ինձ զայն ազդ առնէր անդէն . եւ դու զբաւղին պըտոյտս յայն .
 Օգնեալ յիմոցըս նըպաստից , ուսանէիր արքայորդիդ , [ժամ ,
 Քանի խնամս արկեալ էր իմ յայնժամ գըլխոյդ սիրեցելոյ .
 Թեչիւ եւեթ շանդորրանայր սիրտ սիրուհւոյդ , այլ ի խընդիր
 Անհրաժեշտ վտանգին ինքնին ընկերէի քեզ ուղեցոյց .
 Եւ Փեղրա ի միասին էջս ի բաւիղ անդր արարեալ ,
 Կամ քեւ հանդերձ դառնայր ի վեր , կամ ի կորուստ ընդ քեզ
 [մատնէր :

ԻՊՊՈԼԻՏ

Զինչ է , ով դիք , զոր լսեմ . ոչ քեզ թերեւըս դայ ի յուշ .
 Դըլսոյ տիկին , զի Թեսէոս հայր իմ եւ այր է քոյին :

ՓԵՂՐԱ

Եւ իւ իւիք ըզնա յուշոյ իմմէ անկեալ համարիցիս .
 Ապախտ ուրեմն , արքայորդիդ , ի սպառ ըզփառս իմ առնիցեմ :

ԻՊՊՈԼԻՏ

Ներեւոյն , դըշտոյ տիկին . խոստովանիմ ամաչեցեալ ,
 Զըբարտեցի զանմեղ զըրոյց քոյին , ոչ եւս այսուհետեւ
 Ներէ ամօթ ինձ ի տեսիլ քո հանդարտել , եւ զնամ ի բաց . . .

ՓԵՒՐԱ

Ո՛հ անգութ , կարի իսկ քաջ ի միտ ըզբանս իմ առեր .
 Հերիք իսկ ասացի գոլոյ քեզ զերծ ի վրիպանաց .
 Քաջ է , ծանիր ապա զՓեղորա եւ զմոլեգին կիրքս նորա :
 Սիրեմ , այլ մի կարծիցես զի ի սիրել իմում ըզքեզ ,
 Յաչս իմ անմեղ թըւիցիմ առնել ինձ զանձն անդատապարտ ,
 Եւ մի վատ հաճոյից տածել ի յիս ըզբարաթոյն
 Շամբուշ սիրոյն՝ որ վեր ի վայր հարեալ ըզմիտս իմ վրդովէ .
 Վրիժուց երկնից հէք նըպատակ՝ գարշիմ յանձնէ քան դու յի-
 Դիք ինձ վըկայք , նոքին իսկ դիք՝ որ վառեցին յիս ըզհուր [նէն .
 Աղիտաբեր արեան իմում առհասարակ , նոքին իսկ դիք՝
 Որք անողորմ համարին փառս անձանց տրկար մահկանացուի
 Հրապոյրս ի սիրտ արկանել . զանցեալն ի յուշ ած դու ինքնին .
 Ոչ խորշեցայ եւեթ ի քէն , հալածեցի ըզքեզ , անգութ .
 Գուն գործեցի տըմարդի եւ ատելի քեզ երեւել .
 Առ պընդագոյն գիմամարտել՝ զատելութիւն քո խընդրեցի :
 Այլ զի՞նչ ի զուր ջանիցս ինձ շահ . դու առաւել ատէիր զիս ,
 Եւ ես ոչ ինչ այնուիկ ընդհատ ըզքեզ սիրով սիրէի .
 Աղէտք քոյին գեղ նորանոր ի դէմքս քո յաւելուին .
 Նըւաղեցայ հալեալ ի հուր սիրոյ հիւժեալ յարտասուաց :
 Աչք քո եւեթ բաւեն ածել ըզքեզ ընդ այս ի հաւան ,
 Եթէ վայրիկ մի կարիցես ակընկառոյց լինել ի յիս .
 Եւ զի՞նչ ասեմ . խոստովանել եւեթ զոր այժմ աւասիկ
 խոստովանիմ ամօթով , համարիցիս ինչ ի կամաց :
 Զահի հարեալ վասն որդեկիս՝ զոր չէր մասնել ինձ ի շխեի ,
 Գայի աղերս արկանել քեզ զի մի դու զնա ատեսցես .
 Իղձք ապիկարք սըրտի՝ որ լին է սիրելեալն եւեթ իւրով .
 Աւաղ , զի չկարացի այլ ինչ խօսել բայց ըզքէն :
 Խընդրեա ըզվըէժ քոյին , պատժեա ի յիս ըզսէր ատելի ,
 Դիւցազինն՝ որ դքեզ էած ի լոյս զաւակ արժանաւոր ,
 Ի հրեշէ աստի՝ որ դքեզ գըրգուէ՝ զերծս զտիեզերս .
 Զայրին թեսեսայ ժըպրհեալ ի սէր Իպպոլիտեայ , լուր դու ինձ ,
 Ըզհրէշըն զայն զարհուրելի մի թողուցուս անպատուհաս .
 Ահա քեզ սիրա իմ , այսր ըզձեռնն քոյին պարտ է քեզ մըխել .
 Վաղ իսկ սա ինքըն փոյթեռանդն առ ի քաւել զոճիր իւր ,
 Ըզգամ զի գայ աւասիկ դիմէ բազկի քում ընդառաջ .

Հար, կամ թէ ոչ թուիմքոյումըդ հարուածոյ գոլ արժանի,
 Թէ նախանձի հեռ քո շնորհել ըզքաղցրունակդ ինձ պատու-
 Եթէ գարշիս շողախել ըզձեռն յանարգս յայս ի յարիւն, [հաս,
 Փոխան բազկի քո ըզսուսերըդ զայդ մատո ինձ, աղէ տուր:

ԵՆՈՆԷ

Ձի գործես, դըշտոյ տիկին. արդարադատ դիք. այլ ո՞վ գայ.
 Խոյս տուր, մի վկայս քեզ պատրաստեր դըժպըհիս, եկ մնա ի
 Փախիր յամօթոյ աստի դու ստոյգ նախատանաց: [ներքս օն,

ՏԵՍԻԼ Զ

ԻՊՊՈԼԻՏ, ԹԵՐԱՄԵՆ

ԹԵՐԱՄԵՆ

Ի՞նքն է որ խոյս տայ դըշտոյդ, թէ յումեքէ ձրգի ի գարշ.
 Առիմէ, արքայորդիդ, առի՞նչ դիմաց քոց տըխրութիւն.
 Անսուսեր իսկ տեսանեմ ըզքեզ խռովեալ եւ գունատեալ:

ԻՊՊՈԼԻՏ

Փախիցուք, Թերամենէ, յապուշ հարեալ կամ սաստկապէս.
 Ոչ կարեմ յանձն հայել առանց զարհուրանաց. Փեղրայ... այլ
 Դիք վեհք, ի խոր մոռացօնս անկցին գաղտնիքըս սոսկալիք: [մի

ԹԵՐԱՄԵՆ

Եթէ կամիս ուղւոյ լինել, կազմ եւ պատրաստ կայ կայմ ի չու.
 Այլ այժմէն, տէր, Աթէնք ի յայտ ածին զիւրեանցըն կարծիս.
 Ըզցեղից իւրաքանչիւր առին ըզվարկըս ցեղապետք,
 Յաղթեաց եղբայր քո, եւ Փեղրայ դէպք ի բարի ելին:

ԻՊՊՈԼԻՏ

Փեղրայ:

ԹԵՐԱՄԵՆ

Հրեշտս կ հասեալ գայ յԱթենայ, տէր, զաշխարհին երասանակ
 Տալ է ձեռքս դըշտոյին, թագաւորեաց որդի նորա:

ԻՊՊՈԼԻՏ

Դիք սըրտագետք նորին, իցէ թէ զլաւութիւն իւր վարձատրէք.

ԹԵՐԱՄԵՆ

Այլ շրշունջ իմն ընթանայ խուլ շնչել դեռեւս արքայի .
 Ի կողմանս Եպիրոսի ասեն Թեսեայ երեւեալ .
 Այլ ի խընդիր նորին յածեալ իմ անդանօր, գիտեմ իսկ քաջ . . .

ԻՊՊՈԼԻՏ

Չէ իսկ փոյթ . լուիցուք իսկ զայն , այլ մի անգործ ինչ արաս .
 Հետազօտք համբաւոյն ի յաղբերակն ի վեր ելցուք . [ցուք :
 Եթէ չիցէ նրմա արժան խափան իմոցըս գոլ գնացից ,
 Չու արասցուք . եւ որ ինչ գուն եւ հարկ իցէ մեզ գործել ,
 Գործեսցուք զարժանագոյնն ամբառնալոյ ի գահոյս :

Հ Ա Ն Դ Է Ս Ե Ր Ր Ո Ր Դ



ՏԵՍԻԼ Ա.

ՓԵՒՐԱ, ԵՆՈՆԷ

ՓԵՒՐԱ.

Ո՛հ, թող այլուր ածցին սատիւքդ ինձ ուղերձեալք . ժիտ Ենոնէ,
 Յանկան արտաքս ինձ երեւել, ի՞նչ ըզհէք սիրտ իմ փայփայես .
 Ծածկեա թագո զիս մանաւանդ, կարի յոյժ շատ խօսեցայ,
 Մոլեգնութիւնք իմ իշխեցին յորդել ի դուրս զեղանել .
 Ասացի որ ինչ երբէք չէր արժան գալ յականջալուր :
 Երկինք, եւ իբր ինձ կայր ի լուր , քանի հնարիւք հերքեր յամառ
 Անկարեկիրն ըզլսօսս իմ, զիարդ ջանայր ճեպել ի խոյս .
 Պատկառանք նորա քանի յաճախէին ինձ ամօթ .
 Եւ ընդէր իսկ մերժէիր դու զդժբնդակ խորհուրդ իմ .
 Աւանդ, ի գնել իմում ի սիրտ իմ ըզսուսեր իւր ի հարուած ,
 Այլագունեաց երբէք վասն իմ, խըլեաց յինէն զայն ի բաջ .
 Բաւել բաւեաց հըպել եւեթ ձեռին իմոյ յայն միանգամ ,
 Անել զայն գարշելի յանագորոյն աչքս նորա .
 Ի պըղծութիւն ձեռին իւրում գտանէր երկաթն այն շարարաստ :

ԵՆՈՆԵ

Այդպէս յաղէտըս քո բողոք եւեթ արկեալ, տաճես ըզհուր՝
Զոր պարտ իսկ էր շիջուցանել. ո՛չ լաւագոյն էր քեզ խընդրել,
Դուստր արժանի Մինովայ, յազնըւագոյն ի հնարս հանգիստ,
Ընդդէմ ապաշնորհին՝ որ ի վախուստ ապաւինի՝
Թագաւորել եւ զաշխարհին առնուլ ի ձեռս ըզվարչութիւն :

ՓԵՂՐԱ

Ի՞նձ թագաւորել, ի՞նձ ընդ ձեռամբ ունել զաշխարհ,
Ուր ապիկար ոչ եւրս միտք իմ ինձ զօրեն հրամայել,
Եւ զգայութեանց իսկ իմոց յորժամ ոչ եւս իշխել կարեմ,
Ուր հազիւ իսկ շընչեմ՝ ամօթապարտ լուծ ըստ անձին,
Ուր մեռանիմ :

ԵՆՈՆԵ

Փախիր ի բաց :

ՓԵՂՐԱ

Թողուլ ըզնա ոչ կարեմ :

ԵՆՈՆԵ

Իշխեալ քո զնա աքսորել, չիշխես արդ խոյս տալ ի նմանէ :

ՓԵՂՐԱ

Անց ժամանակն, արդ ճանաչէ նա զտրուփանացս յիմարութիւն.
Անցի արդ եւս ըստ ամօթխած պատկառանաց եզր եւ սահման,
Ըզնախատինս իմ ածեալ յաղթականին իմում ի յայտ.
Եւ յոյս ի սիրտ իմ սըպըրդեալ եմուտ ըստ ոչ իմոց կամաց.
Դու ինքնին ըզնըւաղեալ ոգիս իմ յիս անդրէն կոչեալ,
Եւ ըզուռնչ՝ որ ի շըրթունս իմ թափառէր օրհասական,
Փաղաքուշ քոյովք խրատուք գիտացեր տալ դու ինձ խրախոյս,
Եւ ետուր ակընկալիս ինձ կարելոյ ըզնա սիրել :

ԵՆՈՆԵ

Աւաղ, եւ իմ իմիք չէի ես բաւական առ ի փըրկել
Յաղէտից քոյոց ըզքեզ անպարտակիր կամ մեղապարտ.
Այլ ի գըրգռել թըշնամանաց նորա ըզսիրտ քո ի զայրոյթ,
Իցէ՛ քեզ մարթ մոռանալ զարհամարհանըս գոռողին.
Որովք անագորոյն աչօք յամառն իւր խըստութիւն
Լըքանէր թողոյր ըզքեզ գոգցես առ ոտըս խոնարհեալ.
Քանի՛ զնա ինքն ատելի առնէր վայրագ գոռողութիւն :
Ընդէր Փեղրա չբերէր յայնժամ զիմս ի յանձին ականողիս :

ՓԵՒՐԱ

Մարթ է ի բաց կալ նրմա ի խորխումանէն որ զքեզ խոցէ .
 Սընեալ յանտառս , ու՛վ Ենոնէ , կրէ նա զնոցին վայրենութիւն .
 Իպարտիտ վայրենացեալ ընդ անընդել օրինօք ,
 Նախկին այժմիկ ի լուր սիրոյ՝ առ Հիացման արդեօք լըռէ ,
 Եւ սաստիկ թերեւս իցեն գանգատք մեր յոյժ ըզնրմանէ :

ԵՆՈՆԷ

Յուչ լիցի քեզ զի խուժադուժ երկնեաց ըզնա մայր յարգանդի .

ՓԵՒՐԱ

Թէպէտ ըսկիւթ , թէ խուժադուժ , սակայն երեր սէր ի յանձին .

ԵՆՈՆԷ

Այլ նա ընդդէմ կանանուոյ բերէ յանձին հեռ դըժընդակ :

ՓԵՒՐԱ

Ոչ ժուժեցից տեսանել ոսոխ քան զիս զոր ի վերոյ .
 Տարաժամք աստ ուրեմըն պատահին խորհուրդք քոյին .
 Մոլեգնութեանս իմում օգնեա , եւ մի մըտացս , ու՛վ Ենոնէ .
 Անմատոյց առ ի սիրոյ ընդդիմադրէ նա մեզ սիրտ .
 Գուն գործեսցուք յարձակել ընդ կողմն ի նա տրկարագոյն ,
 Հրապոյրք իշխանութեան թըւին ազդել ի սիրտ նորա .
 Հրապուրէին ըզնա Աթէնք , թաքուցանել զայն ոչ կարաց .
 Վաղ իսկ դէպ անդր էին նաւաց նորին առաջ ուղերձեալ ,
 Տատանէին առագաստք ի շունչ հողմոց թողացուցեալ :
 Երթ , Ենոնէ , երթ յինէն առ պատանին փառատենչիկ ,
 Երեւեցո յաչըս նորա զարքունական թագին փայլիւն ,
 Թող ինքն ի գլուխ իւր ընկալցի ըզսրբազանըն պըսակ ,
 Չկամիմ ինձ այլ ինչ քան ըզփառըս կապելոյ զայն ինձէն .
 Թողցուք ի նա զիշխանութիւն՝ զոր չըկարեմ ես յանձանձել .
 Ուսուցէ նա որդեկին իմում զարուեստ հրամայելոյ ,
 կամեսցի իսկ արդեօք ի տեղի հօր լինել նրմա .
 Ընդ իւրով իշխանութեամբ զորդի եւ զմայր արկանեմ .
 Զամենայն փորձ , միով բանիւ , փորձեա ածել զինքն ի հաւան .
 Առաւել առ նրմա գնայցեն քան զիմքըս բանք քոյին .
 Թախանձ արկ , հեղ արտօսք , յոգւոց հան , նըկարեա՛ նրմա զՓե .
 Օրհասական , մի համարիւր ամօթ աղէրս իսկ արկանել . [դրա
 Ընդունելի է ինձ որ զինչ եւ առնիցես . ի քեզ եւեթ
 Է յոյս իմ , երթ , մընամ դարձիդ՝ առնել որ ինչ կամք են ընդ իս :

ՏԵՍԻԼ Բ

ՓԵՂՐԱ

Որ զամօթ նախատանացրս տեսանեսս յոր զառածայ ,
 Աստղիկ աննըւէր , շիցեմ՝ հերիք նըշաւակեալ .
 Մարթէր իսկ քեզ անդրագոյն զանգըթուլթիւն քոյին մըղեւ .
 Ի գլուխ տարար ըզյաղթանակ , հարուածք նետից քոց բնաւից
 Յաջողեցին . եթէ կամիս նորանըշան առնել քեզ փառս ,
 Դիմեա յոսոխ քո խրոխտագոյն քան զայլս ընդդէմ՝ քո ապըս-
 Իպպոլիտ խուսէ ի քէն , եւ ըզզայրոյթ քո նըշկահէ , [տամբ,
 Չիք եւ չիք երբէք նորա ծունըր բագնաց քոյոց կըրկնեալ .
 Ըզըսեւիս իւր ըզգոռոզ խոցէ գողցեսս անուն քոյին .
 Վրէժխընդիր լեր գիցուհիդ , հասարակաց է մեզ դատ .
 Տուր նըմա սիրել . . . այլ վաղ իսկ դու դառնաս , ով Ենոնէ .
 Այլ նա գարշի մերժի յինէն , նա ստունգանէ աւաղիկ քեզ :

ՏԵՍԻԼ Գ

ՓԵՂՐԱ, ԵՆՈՆԷ

ԵՆՈՆԷ

Ըզսին սիրոյ , գըշտոյ տիկին , հարկ է ի բաց դընել ըզհոգ .
 Յուշ լիցի քեզ որ մինչեւ ցարդ առաքինի քոյին կենցաղ :
 Որ ընդ մեռեալս կարծէր արքայն ահա գայ յերեւան .
 Ահա հասեալ գայ Թեսէոս , Թեսէոս աստ է առ մեզ ,
 Ռամիկն ի տես նորին ճեպի , եւ յեւանել իմում ի քէն
 Առ ի խընդիր Իպպոլիտեայ՝ բիւր աղաղակք յերկինս հընչեալ . . .

ՓԵՂՐԱ

Այր իմ կենդանի . բաւ է ցայդ վայր , ով Ենոնէ .
 Խոստովանեալ ի թըշնամանս իւր յինէն սէր անարժան .
 Արդ կեայ նա , եւ չէն ինձ պէտք ըզնըմանէ գիտել ինչ այլ :

ԵՆՈՆԷ

Եւ զինչ խորհիս .

ՓԵՌՐԱ

Ասացի զայն , այլ դու լըսել ոչ կամեցար .
 Արտասուք քո յաղթեցին իրաւացի իմում խըղճի .
 Արժանաւոր ողբոց լինէր ինձ մեռանել առաւօտուս ,
 Խրատուց քոց անսացի , արդ մեռանիմ նախատալից :

ԵՆՈՆԷ

Մեռանիմ .

ՓԵՌՐԱ

Արդարադատ երկինք , եւ զինչ գործեցի զայս .
 Հասանէ այր իմ եւ որդի իւր աւասիկ ի միասին .
 Դէտ ըզդիտակըն գողացիկ սիրոյ իմոյ տեսից կացեալ՝
 Թէ որով երեսօք մատչել առ հայր իւր իշխիցեմ
 Ի սիրտ լըցեալ հառաչանօք՝ որոց երբէք նա ոչ լըւաւ ,
 Յաչըս թացեալս արտասուօք՝ զորս ապաշնորհն ի բաց մերժեաց :
 Կարծիցես զի հոգացեալ նորա ընդ փառքս թեսեայ ,
 Ծածկեսցէ ի նմանէ ըզբոց սիրոյս իւ բորբոքիմ ,
 Եւ զանց արասցէ մատնել ըզհայր իւր եւ զարքայ .
 Կարասցէ նա ժոյժ ունել զարհուրանացն իւրոց յինէն :
 Նա ի նանիր իսկ լըռեսցէ , ինձէն զոճիրս իմ գիտեմ .
 Չեմ ի ժըպիրհ կանանց անտի , իմս Ենոնէ , որ գիտացին՝
 Չանդորրը վայելեալ խաղաղութիւն յեղեռն իսկ անդ՝
 Առնել իւրեանց դէմս յորում ոչ ծնանին երբէք շառագունանք .
 Ճանաչեմ ըզմոլեգին կիրս իմ , յիշեմ զամենայն .
 Որմբս այտօքիկ , որմք եւ կամարք թըլին ինձ գալ ի լեզու ,
 Եւ մնան թեսեայ՝ կազմք ի բողբօք զինէն՝ յայտնել նըմա զպատ-

[րանս :

Մեռայց , եւ մահ զիս յայտքանեաց զարհուրանաց ապրեցուսցէ .
 Իցէ իսկ ճն մեծ ինչ աղէտ ըզկայ առնուլ ի կենաց .
 Չէ երբէք մահ զարհուրելի չարաբաստից . չիք ահարկու
 Չիք ինձ այլ ինչ բաց յանուանէ՝ զոր մնայ թողուլ ինձ ըզհետ իմ .
 Որդւոց իմոց աւաղելեաց քանի՜ դըժնեայ ժառանգութիւն .
 Խրախոյս ի սիրտ նոցին պարտի ազգել արիւն որմըզդական .
 Այլ որչափ եւ յիրաւի դիւցազն արեամբքն պանծասցին ,
 Սակայն եղեռըն մայրենի բեռն է նոցա ծանրակիր .
 Խիթամ զի զբոյց յաւուր միում , աւաղ , կարի իսկ ճըշմարիտ
 Յանդիման կացուսցէ նոցա զիւրեանց մայր մեղապարտ .
 Խիթամ զի բեռն այն դըժպըհի զնոսա ընկճեալ ի կորանս ,
 Ոչ իշխեսցեն երկաքանչիւր եւ ոչ ի վեր զաչս ամբառնալ :

ԵՆՈՆԷ

Չիք երկբայել ընդ այդ , ողբամ զերկաքանչիւր իսկ ըզնոսին .
 Չիք իսկ եւ չիք քան ըզքոյդ երբէք երկիւղ իրաւացի .
 Այլ ընդէր իցէ քեզ զայդպիսի կեղտ նախատանաց
 Ածել ըզնորօք , ընդէր անձին գոլ դատախազ .
 Ոչ եւս իցէ ճար , ասասցեն զի մեղապարտ գըտեալ Փեղրա ,
 Խոյս ետ յահէ երեսաց առն իւրոյ ի բաց որում դըրժեաց .
 Դէպք ի բարի յաջողեացեն Իպպոլիտեայ , ում դու ինքնին
 Տուժիւք կենաց քոց ի մահուդ լիցիս բանիցըն վըկայ :
 Զինչ պատասխանել դատախազին քում կարացից .
 Կայ եւ մընայ ինձ առաջի իւր գըտանել ամաչեցեալ .
 Տեսից ըզնա խրոխտապանձ ընդ յաղթանակ իւր սոսկալի ,
 Եւ պատմեսցէ նա զնախատինըս քո՝ գըտեալ իւր ունկընդիր :
 Ո՛հ , զի բոց երկնառաք ըսպառեսցէ զիս մանաւանդ ,
 Այլ մի խաբեր դու զիս , իցէ նա տակաւին քեզ սիրելի .
 Որո՞վ ազամբ արդ տեսանես դու ըզյանդուզն արքայորդին :

ՓԵՂՐԱ

Հըրէչ ըզնա զարհուրելի տեսանեմ յաչս իմ երեւեալ :

ԵՆՈՆԷ

Ընդէր ապա թողուս նըմա լի բովանդակ ըզյաղթուժիւն .
 Փոխանակ երկընչելոյ լեր դու նըմին դատախազ
 Զեղեռանէ յոր կարէ ինքն ըզքեզ այժմիկ ամբատտանել .
 Ո՞ զքեզ ցուցցէ սուտ , ամենայն ինչ հակառակ իւր վըկայէ .
 Սուսեր նորին ի ձեռըս քո , յաջողելով բախտին , թողեալ .
 Աղմուկ քոյին այժմու , եւ վիշտ յառաջագոյն յանձին բերեալ .
 Հօրն ի բազմաց հետէ գրաւեալ միտք ի բողոքըս քոյին ,
 Եւ հրաման աքսորանաց նորա ի քէն վաղ ընկալեալ :

ՓԵՂՐԱ

Ի՞նձ , Ենոնէ , ի՞նձ ընկճել եւ զըրպարտել զանմեղուժիւն :

ԵՆՈՆԷ

Շատ իսկ լուել քոյին իմումս է տիրասէր նախանձու .
 Ըզդողանի քո պէս հարեալ ըզգամ եւ ես ըզխայթ խըղճի .
 Յօժարագոյն ի բիւր մահունս էր տեսանել քեզ դիմեալ զիս .
 Այլ զի առանց դառըն գեղոյս մընայ զքեզ ինձ կորուսանել ,
 Կեանք քո այնքան է պատուական ինձ զի արժէ զամենայն :
 Խօսեցայց , եւ յազգմանէ իմմէ թեսեայ դառնացեալ ,
 Աքսորանօք եւեթ ըզվրէժ իւր խընդրեսցէ նա ի յորդւոյն ,

Հայր որ, դըշխոյ տիկին, միշտ հայր է ի պատժել իսկ իւրում.
 Բաւէ թեթեւ ինչ պատուհաս սըրտմըտու թէն առ ի յագուրդ :
 Այլ եթէ հարկ իսկ երբէք լիցի անպարտ արեանն հեղման ,
 Ձինչ իսկ պատուոյ քոյին վըտանգ ոչ աստանօր պահանջիցէ .
 Մեծ է յոյժ գանձդ այդ, եւ չէ օրէն դընել զայդ ի կըշիռ .
 Ձոր ինչ օրէնս եւ տացէ , անսալ այնմիկ պարտ է , տիկին .
 Պարտ է քեզ առ ի փըրկել ըզհալածեալ պատիւ քոյին ,
 Փոխանակել զամենայն զառաքինութիւն իսկ զոհել :
 Այլ ո՞վ գայ այսըր . տեսանեմ ես աւաղիկ ըզթեսէոս .

ՓԵՂՐԱ

Ա՛հ , տեսանեմ ես զիպպոլիտ , եւ ի ստահակ աչըս նորա
 կընքեալ ըզմահ իմ տեսանեմ . արա որ ինչ կամք իցեն քեզ ,
 ի ձեռքս քո կամ , ասիկար ի խռով սըրտիս օգնել անձին :

ՏԵՍԻԼ Դ

ԹԵՍԷՆՈՍ , ԻՍՄԵՆԷ , ՓԵՂՐԱ , ԵՆՈՐԷ , ԹԵՐԱՄԵՆ

ԹԵՍԷՆՈՍ

Ոչ եւրս բախտ , տիկին , թըւի ինձ հակառակ . եւ գիրկս ըզքե...

ՓԵՂՐԱ

Կաց թեսէ , մի անսուրբ առներ ըզգեղեցիկ զեղումն ըզձից .
 Չեմ արժանի այսուհետեւ քաղցըր քոյոցըդ գըգուանաց .
 Թըշնամանեալ գըտանիս . մինչդեռ կայիր դու ի բացեայ
 Բախտ նախանձոտ չարակնեալ , եւ ոչ խնայեաց ի հարսըն քո .
 Անարժանիս քումըդ սիրոյ եւ մատչելոյ իսկ առ քեզ
 Մընայ այսուհետեւ խոյս յերեսաց քոց տալ ի բաց :

ՏԵՍԻԼ Ե

ԹԵՍԷՆՈՍ , ԻՊՊՈՒԼԻՏ , ԹԵՐԱՄԵՆ

ԹԵՍԷՆՈՍ

Ձինչ այս նորանըշան հիւրընկալիք հօր քում , որդեակ :

ԻՊՊՈՒԼԻՏ

Փեղրայ եւեթ բացայայտել մարթ է զզաղանիս այդորիկ .

Այլ եթէ իղձք սրբաի իմոյ շարժեն ըզքեզ, հայր, ի գորով,
 Կերեա մի եւս ինձ տեսանել ըզնա, եւ թող իսպառլիտեայ
 Խուսել ահիւ ի վայրաց՝ ուրանօր հարսըն քո բնակէ :

ԹԵՍԷՈՍ

Առ ի՞նչ, որդեակ իմ, թողուս զիս .

ԻՊՊՈԼԻՏ

Ոչ խընդրէի ես ըզնա .

Դու զնա ածեր այսրը, քեզ ո՞վ հայր ի մեկնել քո աստի
 Հաճոյ թուեցաւ աւանդել ի տրեզնեանն աստ ի յափունս
 ԶՍրիկիա եւ զգրչխոյն, յանձնեալ ի խնամս իմ զիւրեանց պահ .
 Այլ ո՞ր խընամք այսուհետեւ կարիցեն տալ ինձ յամել աստ,
 Շատ իսկ երբեմն ի յանտառսս սլարապորդն իմ մանկութիւն
 Արար հանդէս քաջութեան իւրոյ ընդդէմ վատ թըշնամեաց .
 Եւ չկարիցեմ, հրաժեշտ տըւեալ արդ յանարժան հանգըստենէ,
 Ի փառաւոր եւս ի յարիւն ըզգեղարդունս իմ ներկանել :
 Մինչքեւ հասեալ քո ի տիս՝ յոր ես արդ եւս ժամանեմ,
 Վաղ իսկ յոգունց ի գոռոզից ըզզօրութեան բազկի քո
 Եւ ամեհեաց հրէշից յոգունց վաղ իսկ առեալ էր ըզփորձ .
 Քաջայաղթ ի ստահակ հինից վանել ըզխեռութիւն,
 Զերկուց ծովուց անդըստին ապահովեալ էր քո զեզերս,
 Ոչ եւս ազատն ուղեւոր ահափետէր ի յարձակմանց .
 Հերակլ ոգի քոյոցդ ի լուր առեալ գործոց քաջութեան,
 Ի քեզ վըստահ այնուհետեւ յերկոց իւրոց դադարէր :
 Իսկ ես որդի վատանըշան այդպիսւոյ հօր երեւելոյ,
 Ի մայրենեաց իսկ ի հետոց ընդէր գըտայց վերջացեալ . [նել .
 Թոյլ տուր ինձ, հայր, աստ ուրեմն իշխել բազուկ ի գործ առ-
 Թոյլ տուր զի հրէշ ինչ թէ ի քէն գտանի խուսեալ, զայնորիկ
 Ես ինքն առ ոտըս քո ածից ըզպանծալի կողոպուտ .
 Կամ զի չըքնաղ իմոյս մահուան յարատեւող յիշատակ,
 Յաւերժացեալ աւուրքք այսպէս արիաբար զըաւելովք,
 Յուցցէ հանուրց առ յապայս զի ես որդի էի քոյին :

ԹԵՍԷՈՍ

Զինչ տեսանեմ, զինչ արհաւիրքըս տարածեալ շուրջ համաս
 Որ զընտանիքս իմ ըստիպեն խոյս ի յինէն տալ ահաբեկ . [փիւռ,
 Եթէ դառնամ ահարկու եւ ոչ իմոցըս ցանկալի,
 Առիմէ՞ զերծուցիք զիս ի բանտէ իմմէ, երկինք :
 Իմ միակ էր բարեկամ, որ ի շամբուշ վառեալ ի սէր՝
 Զեպիրական գոռոզին երթայր ըզհարսն յափըշտակել .
 Սիրատարփ ըզձից նորա աղամայ յանձն առի օգնել .

Այլ բախտըն զայրացեալ եւ զնա եւ զիս կուրացոյց .
 Անկայ ի ձեռքս գոռոզին անպատրաստար ասպազէն ,
 Եւ արտասուաց ինձ առիթ զաւաղելին ըզՊիրիթով
 Տեսի ի վայրենւոյն մատնեալ հրէշից անողորմից ,
 Զորս ի նախճիր հէք եւ թըշուառ մահականացուաց կերակրէր :
 Զիս իսկ փակեաց նա ի նըսեմ անդ ի փապարըս բանտարգել ,
 Յանդընդային ի վայրըս մերձ ի պետութիւն ուրուականաց .
 Ամիսք վեցեակ անցեալ , եւ դից յետոյ ուրեմն յիս ակնարկեալ ,
 Խոյս ի յաչաց դիտացի տալ որոց ինձ պահ ունէին .
 Զերծուցի զտիեզերս ի նենգաւորըն թըշնամուոյ ,
 Եղեւ նոցունց իսկ իւրայնոց հրէշից նա ինքըն ճարակ :
 Եւ մինչ մատչել խորհիմս անձկով առ որս ի դիցըն պարգեւաց
 Սիրելագոյն քան զամենայն ինչ թողեալ ինձ . եւ զինչ ասեմ ,
 Մինչ այն ինչ անձն իմ յինքն եկեալ տարիի յայսքան քաղցր ի
 Փոխանակ հիւրընկալեաց ինձ արհաւիրք գան ընդառաջ . [յայց ,
 Իընաւք խուսեն , բընաւք հրաժեշտ տան ի գըրկաց իմոց ի բաց ,
 Եւ իմ ինքնին կրելով ի յիս որ ինչ սոսկումն ի յայլս ազդեմ ,
 Յեպիրականս անդ դեռ ի բանաբս ցանկալի էր ինձ գտանել :
 Աղէ խօսեաց , զի թըշնամանս ինձ բողոքէ Փեղրա հասեալ .
 Յուամէ գտանիմ մատնեալ , եւ էր ուրուք ըզվրէժ իմ ոչ խըն-
 Ելլադա , ում լեալ բազուկ իմ այնքանիցըս պիտանի , [դրեալ .
 Իցէ թէ վայր ապաստանի իշխէ շնորհել չարագործին :
 Լուռ եւեթ կայք . իցէ իսկ մարթ եթէ որդեակ իմ հարազատ
 Ընդ թըշնամիս իմ համախոհ իցէ եւ նա . մըտցուք ապա ,
 Ծանր ինձ եւ յոյժ ծանր է ինձ կալ յերկբայս՝ որ զիսըն տազնա-
 Ծանիցուք զեղեռնաւորն իսկ եւ զեղեռն համանգամայն . [պէ-
 Լիցի Փեղրայ յայտնել զաղմուկն՝ յոր զինքն յուզեալ տեսանեմ :

ՏԵՍԻԼ Զ

ԻՊՊՈՒԻՏ , ԹԵՐԱՄԵՆ

ԻՊՊՈՒԻՏ

Ո՛ւր ակնարկեն խօսիցըս դէմք՝ որ լըցին զանձն իմ արհաւրօք .
 Փեղրա մատնեալ դեռ ի զայրոյթ իւր մոլեգին՝ կամիցի՞
 Ընդդէմ անձին գող ի կորուստ իւր դատախազ . եւ զինչ , ո՞վ դիք ,
 Գողցէ հայրն իմ , զո՞ր չարաթոյն ըզբոլոր տամըն եհեղ սէր .
 Ես ինքնին վառեալ ի հուր՝ զոր հեռ նորին դատասպարտէ .
 Որպիսի եթող նա զիս , եւ որպիսի արդ գըտանէ .
 Տըխուր անդէճք ազդեն յիս ահ , այլ է վըստահ անմեղութիւն .

Երթիցուք խընդրել այլուր որովք հնարիւք ըզհօրն խմոյ
 Մարթիցէ ինձ աջողակի շարժել ըզսիրտ ի գորով,
 Եւ յայտնել նրմա ըզսէր, զոր նա կարող է աղմբկել՝
 Այլ բովանդակ իշխանութեամբն խափանել զայն ոչ կարէ:

Հ Ա Ն Դ Է Ս Զ Ո Ր Ր Ո Ր Դ

Տ Ե Ս Ի Լ Ա

Թ Ե Ս Է Ո Ս, Ե Ն Ո Ն Է

Թ Ե Ս Է Ո Ս

Ո՛հ, զինչ է այդ զոր լսեմ. որդի ժըպիրհ, որդի մատնիչ
 Զայդպիսի՞ թըշնամանըս պատրաստէր ինձ հօր իւրում.
 Քանի խըստիւ մըտեալ ըզհետ իմ հալածես դու զիս ո՞վ բախտ.
 Ոչ գիտեմ ո՞ւր դիմեալ երթամ, ոչ գիտեմ ո՞ւր իսկ իցեմ.
 Ո՞վ չարաչար փոխարինեալ գութ եւ գորով հայրենի.
 Իղձ յանդուգըն, ժանտ խորհուրդ, իւ ի յագուրդ անարգ սիրոյն
 Ըզբընութիւն իւր զօրաւիգն առնոյր ըմբօստն այն ի կիր.
 Ծանեայ զսուսերըն մոլեգին տըռփից նորա եղեալ գործի,
 Ըզսուսերն իւ զինեցի ըզնա ի վեհ քաջութիւն.
 Բնաւ իսկ եւ զօդք ըզնա արեան ոչ զօրեցին սանձահարել.
 Եւ իբր յամեալ Փեղրայ ի տալ ըզնա անդէն պատուհասել.
 Փեղրա իցէ՞ թէ լըռութեամբ ի մեղապարտըն խնայէր:

Ե Ն Ո Ն Է

Փեղրա խնայել խնայէր ի քեզ հանապազօր ի հէքդ ի հարս.
 Զամօթի հարեալ ընդ միտըս մոլեղոյ տարփաւորին,
 Եւ ընդ հուրն եղեռնաւոր փայլատակեալ յաչըս նորա,
 Փեղրա զրաւէր ի կենաց, տէր արքայ, եւ ձեռն իւր մահառիթ
 Շիջուցանէր զաչաց իւրոց ի սպառ ըզլոյս անպարտական.
 Տեսի զբազուկ իւր վերամբարձ, եւ դիմեցի փըրկել ըզնա.
 Ես ինքըն միայնակ ըզնա սիրոյ քում պահեցի.
 Եւ կարեկից եղեալ ընդ վիշտ իւր եւ ընդ քոյդ իսկ ընդ տագ-
 վըկայելքեզ զարտասուս իւր ակամայ ստիպեցայ: [նապ,

ԹԵՍԷՆՈՍ

Ոչ կարաց զայլագունել իւր հայրադրութն արգելուլ,
 Ի մատչել իւրում առ իս դողայր յահէ կասկածանաց .
 Հիացեալ ընդ թախծութիւն նորին , եւ գութ իմ պաղեցաւ
 Ի ցըրտագինըս նորին գիրկըս զինեւ արկանելոյ .
 Այլ սէրն այն մեղապարտ , որով նա արդ տոչորի ,
 Է՞ր ինչ ի նմա եւ ի յԱթենըս վաղ ուրեմն երեւեալ :

ԵՆՈՆԷ

Յուշ լիցի քեզ , տէր արքայ , բողոք բառնալ անդ դըշխոյին .
 Սէր եղեռնաւոր ազդէր ըզհեռն զայն ի նա :

ԹԵՍԷՆՈՍ

Ապա ուրեմն աստ ի Տրեզեն հուրն այն անդրէն արծարծեցաւ :

ԵՆՈՆԷ

Պատմեցի քեզ , տէր արքայ , որ ինչ անցին մինչեւ ցարդ անցք .
 Յամեցի շատ ի մահառիթ վըշտին թողեալ ըզդըշխոյն ,
 Ներեսջիր ինձ մեկնիլ ի քէն եւ առ նա ինքըն փութալ :

ՏԵՍԻԼ Բ

ԹԵՍԷՆՈՍ , ԻՊՊՈԼԻՏ

ԹԵՍԷՆՈՍ

Ո՛հ , ահա գայ . ո՞վ դէք , եւ ո՞ր աչք ոչ խաբին իմոցս հանդոյն
 Ի տեսիլ վեհ կերպարանացն . ի դէմըս ժանտ մըծղընէի
 Ընդէր իցէ զի վայլեն առաքինւոյ տիպք սըրբազանք .
 Չէր պարտ ի ստոյգ նըշանաց գիտել ըզսիրտ դաւող մարդկան :

ԻՊՊՈԼԻՏ

Իցէ՞ օրէն ինձ , տէր արքայ , գիտել որ ինչ խէթ դըժընդակ
 Հասու եղեւ աղմըկել ըզվեհափառ դէմըս քոյին .
 Չիշխես իմումս հաւատարիմ սիրոյ զգաղանխսըդ վըստահել :

ԹԵՍԷՆՈՍ

Ուխտադրութ որդի , իշխես դու առաջի իմ երեւել .
 Հրէշ՝ զոր երկինք ամպահարել կարի նդերկար ինայեցին .
 Ժանտ մընացուած յելուզակաց՝ զորս արարի բնաջինջ յերկրէ .

Ջարհուրական տրուփանաց սիղեխարար մոլեգնութեամբ
 Մինչեւ անդր ի յառագաստ հօր քո զքոյին վարեալ զայրոյթ ,
 Զոխերիմ ըզգլուխդ իշխես դեռեւս առնել ինձ յանդիման .
 Երեւին դեռեւս ի վայրըս լիս քոյովք նախատանօք ,
 Եւ ոչ գընաս տարադէմ ընդ անձանօթ երկնաւ խընդրել
 Երկիր ուրեք՝ ուրանօք շիցէ անուն իմ ժամանեալ .
 Կորիր դրութան , մի գբէն սըրտիս մի գար ինձ այսր արհամար .
 Եւ մի զզայրոյթ իմ փորձեր զոր նըւաճել հազիւ կարեմ . [հեւ
 Շատ իսկ իցեն ինձ եւ կարի շատ նախատինքն յաւերժականք
 Ածելոյ իմոյ ի լոյս քո պէս որդի եղեռնաւոր .
 Չեն ինչ պէտք զի եւ մահ քոյին անուան իմում ի կեղտ
 Ըզքաջայաղթ ճըգանց իմոց յաւելցէ զփառս ապականել :
 Կորիր ի բաց , եւ եթէ ոչ կամիս արագ պատուհասիւ
 Յաւելուլ յեղեռնաւորս անդր ի բազկէ աստի պատժեալս ,
 Ըզգոյշ լեր՝ զի մի արեւ ըզքեզ ի վայրս յայտոսիկ
 Տեսցէ յանդուգն ոտամբ կոխեալ . երթ եւ անդարձ ճեպեալ ի
 Սըրբեա զերկիր իմ յերեսաց այտի քոյոց զարհուրելեաց : [չու ,
 Եւ դու , Պիտիդ , եթէ զեզերըս քո բազուկ իմ վազ զերծոյց
 ի ժանտաժուտ հինից , յիշեա զի վարձ իմոցըս քաջութեանց
 Խոստացար ընդունել ըզպաղատանս իմ նախընծայս .
 Ի խուժողուժ բանտին տուայտեալ ի խըստութիւն երկարաձիդ ,
 Ոչ աղերսեցի զանմահ երեսըս քոյին ,
 Ի կարեւոր եւս ի կարիս զուխտս իմ պահեալ ընծայել քեզ .
 Ժլատ ի հայցել օգնութիւնս՝ ոյց ի խնամոց քոց ակն ունիմ .
 Աղերս այժմիկ քեզ արկանեմ , ըզհիքիս հօր խընդրեա ըզվրէժ .
 Ի մեծասաստ ցասումըն քո ըզդաւաճանըս զայս մատնեմ ,
 Շիջո յարեան իւրում ի սպառ . ըզժանտ տրուփանըս նորին ,
 Եւ ի զայրոյթ քո ծանիցէ Թեասէ ըզնորհըս քոյին :

ԻՊՊՈԼԻՏ

Փեղրա ի տուխի եղեռնաւոր ամբաստանէ զխալոլիտ .
 Այլ զարհուրիմ սոսկացեալ ընդ այդպիսի եղեռն մեծ .
 Այդքան հարուածք յեղակարծք միանգամայն յիս տեղացեալ ,
 Ընկճեն եւ համբ՝ հեղձամըղձուկ զիս արարեալ կացուցանեն :

ԹԵՍԻՍ

Նենգաւոր դու կարծէիր զի վատօրէն լըռութեամբ
 Թագուսցէ յինէն Փեղրա զանասնեղէնըդ ժըպրհութիւն .
 Չէր ի խուսել քո քեզ պարտ թողուլ զերկաթ քո առ նըմա ,
 Զերկաթն որ զքեզ դատապարտէ . կամ մանաւանդ պարտ էր քեզ
 Բառնալ ի լրումըն դրժանացդ ի նմանէ զկեանս եւ ըզբարբառ :

ԻՊՊՈԼԻՏ

Դըրդեալ ընդ վատ զըրպարտութիւնդ ի յիս ցասումն իրաւացի
 Բուռն ինձ առնէ աստ մերկանալ քեզ, տէր արքայ, զճըշմարտու-
 Սակայն լռեմ գաղտնիս ի քէն՝ որ զքեզ ի սիրտ հարկանէ: [Թի.
 Հաճեաց ընդ պատկառանս՝ որ ըզքերան իմ փակէ .
 Եւ առ ի մի յաւելուլ քեզ վիշտըս քեզէն, խորհես ջիր քաջ,
 Առ ի քընին, որպիսի որ իցեմ եւ կեանք իմ որպիսի .
 Ոճիր եղեռան կարապետեն միշտ եղերունք .
 Որ ըստ սահման օրինաւոր իշխէ ի բաց անցանել,
 Մարթ է նրմա զսրբազնագոյն օրէնս առ ոտըն կոխել .
 Լաուժեան եւ յոռութեան աստիճանեալ են ելեւէջք,
 Չիք իսկ եւ չիք զերկիւղած անմեղութեան տեսեալ ուրուք
 Յանկարծակի ի ծայրայեղ յանդըգնութիւն զառածանել,
 Եւ ոչ զայր առաքինի լեալ ի միում եւեթ աւուր
 Յելուզակ անագորոյն, լեալ մըծըղնեայ կնամարդի .
 Ի գիրկըս մօր դիւցազնուհւոյ պարկեշտ տիկնոջ գերագրգու-
 Չիք իմ եւ չիք մայրենւոյ արեան նորա ստուերած ածեալ. [եալ,
 Պիթէ վկայեալ իմաստուն ի մէջ հանուրց մահկանացուաց
 Հաճեցաւ յելս իմ ի ձեռաց նորա հրահանգս ինձ յաւելուլ .
 Իբր ոչ եթէ կամիցիմ առնել ինձ պերճ նըկարագիր,
 Այլ եթէ ինչ ի լաուժեանց իցէ հասեալ ինձ ի բաժին,
 Յայտնագոյնըս զայն թըւի ինձ, տէր արքայ, ցուցեալ ի վրէժ
 Ընդդէմ եղեռանն՝ իւ զիս իշխեննըն զըրպարտել:
 Իպսոյլիտ յայս նըկարագիր ընդ Ելլադա է ծանօթ, [տութե.
 Վարեալ մինչ անդր ի տմարդութիւն զանկ եւ զպարտոյս ըզգաս
 Յայտնի բնաւից անընկճելի տարփիցս իմոց է խըստութիւն .
 Ոչ առաւել տուընջենայինն է լոյս քան զիմ սիրտ անապակ,
 Եւ համարի Խպսոյլիտ ի սէր անսուրբ տարփենաւոր ...

ԹԵՍԷՈՍ

Այո, դոյն այդ քոյին խրոխտումն, սվ վատ, ըզքեզ դատապարտէ.
 Ոչ ինչ զանխուլ ինձ հովութեանցըդ քոց պատճառք են ատելիք.
 Փեղրա եւեթ ըզվաւաշոտ ականողիս քո զօշոտէր .
 Զայլոց բնաւից սիրտ քո անփոյթ՝ դըժկամակեալ ընդ սէր ամ-
 [բիծ:

ԻՊՊՈԼԻՏ

Ոչ, հայր իմ, ոչ սիրտս այս, ընդէր է ինձ լռել զայն ի քէն,
 Սիրտս այս ի բոց ամբիծ սիրոյ ոչ գըտաւ ոչ դըժկամակեալ .
 Խոստովանիմ առ ոտըս քո որ ինչ ըստոյզն է յիս յանցուած .
 Սիրեմ այո, չկարեմ ժըխտել, սիրեմ ընդդէմ քո հրամանի .
 Գրաւէ նա ինքն Արիկիա գերեալ ըզսիրտ իմ ի սէր իւր .

Դուստրը Պալլասայ յաղթեաց որդւոյ քում, տէր արքայ .
 Սիրել սիրեմ ըզնա , եւ սիրտ իմ ի սաստից քոց ապրստամբ
 Չկարէ այլում ումեք անձկալ, չկարէ վառիլ ի բոց այլ :

ԹԵՍԷՆՍ

Եւ սիրես դու զԱրիկիա : Երկինք , այլ ոչ . ծանծաղ են հնարք ,
 Առ ի ծածկել զեղեռն քո կեղծաւորիս դու յանցաւոր :

ԻՊՊՈԼԻՏ

Ամիսք են վեց , տէր արքայ , զի յերեսաց նորա խուսեմ
 Որ կաթոզնիմն ի սէր նորա . գայի յայտնել զայն դողութեամբ .
 Այլ աւանդ , ի պատրանաց քոց չիք հընար թափել ըզքեզ .
 Եւ որովք ահագին երդմամբք իցէ պարտ հերքել զայն .
 Օն եւ օն երկինք երկիր եւ հոյք էիցս համագոյից . . .

ԹԵՍԷՆՍ

Ի սրտերգմունքս միշտ անկեալ ապաստանին եղեռնաւորք .
 Կասիր , դադարեա , մի զդժպլհիս ինձ բարբառի ,
 Թէ կեղծ ի կեղծ ըզգաստութեան քո քեզ չիցէ այլ ապացոյց :

ԻՊՊՈԼԻՏ

Կեղծ ի կեղծ թըլի քեզ այն եւ պաճուճեալ վեր ի վերոյ .
 Փեղրա ի սիրտ իւր առաւել վկայէ իմումս անմեղութեան :

ԹԵՍԷՆՍ

Ո՛հ զի ժըպիրհ յանդըգնութիւն քոյին դըրդէ զիս ի զայրոյթ .

ԻՊՊՈԼԻՏ

Աքսորանաց իմոց զո՞ր վայր զո՞ր ժամանակ սահմանես .

ԹԵՍԷՆՍ

Անդր իսկ թէ զքեզ քան զերակլեան արձանս ի բաց հալածէի ,
 Թըւէր ինձ կալ տակաւին կարի իսկ մերձ նենգաւորիդ :

ԻՊՊՈԼԻՏ

Եղեռն ի յիս ահագին՝ զոր կասկածեսըդ , հայր , զինէն՝
 Զո՞ երբէք ի սիրելեաց ի գութ ածից մերժեալ ի քէն :

ԹԵՍԷՆՍ

Ե՛րթ խընդրեսըիր քեզ սիրելիս՝ որոց ըզքէն վարկ դժբնդակ
 Դըրուատեսցէ ըզքո շնութիւն , եւ ծափս հարցէ մըծղնէութե՛ ,
 Ըղխաբերայս և զապաշնորհս՝ ոյց չէ զխառաց փոյթ , չեն օրէնք ,

Արժանիս զայր եղեռնաւոր իբրեւ ըզքեզ պաշտպանելոյ :

ԻՊՊՈՒԻՏ

Մըծղնէութեան և շնութեան լուեալ միշտ ճառս ի քէն , լուեմ .
Սակայն Փեղրա որդի է մօր եւ այնպիսւոյ կըցորդ արեան ,
Զոր քաջ գիտես , տէր , լի քան զիմս ի խոհերաց այտի բնաւից :

ԹԵՍԷՈՍ

Է՛՛՛՛ զի՞ խեռեալ ի սանձուց մօլի զայրոյթ քո առ ինեւ .
Ի նուագ յետին՝ ել յերեսաց խմոց , կորիր դու դրութան ,
Զեւ հայրենի վարեալ սաստից անարգանօք ըզքեզ ի քարշ :

ՏԵՍԻԼ Գ

ԹԵՍԷՈՍ

Հէք եւ թըշուառ , դու ի յանշուշտ կորուստ քոյին ընթանաս .
Պիտիդ ի գետ անդր աստուածոց իսկ ահարկու երգուաւ ինձ ,
Եւ կացուսցէ զսոստուամն իւր արդ . ի վրէժխընդիր դիցն հալա-
խոյս ի նմանէ ոչ կարես տալ . սիրէի զքեզ , և զգամ այժմէն՝ [ծիս ,
Թըշնամանեալ իսկ ի քէն՝ զի գութք ի յիս յուզին ընդ քեզ .
Այլ դու քեզէն ըստիպեցեր զիս դատապարտ առնել ըզքեզ .
Ո՞ իսկ ի հարց ծանրը քան զայս կըրեաց երբէք նախատինս .
Արդարադատ դիք , որ զաղէտս՝ յորոց ընկճիմըս՝ տեսանէք ,
Ընդէր եղեւ ինձ այսպիսի ածել ի լոյս զաւակ ժանտ :

ՏԵՍԻԼ Դ

ՓԵՒՐԱ, ԹԵՍԷՈՍ

ՓԵՒՐԱ

Տէր արքայ , արդար ահիւ առ ոտըս քո գամ տագնապեալ .
Բարբառ քոյին ահաւոր մինչեւ ի ներքս առ իս եհաս .
Մի գուցէ սպառնալեաց քոց հետընդհետ հասցեն արգիւնք .
Եթէ չիցէ տարաժամ , յիս տէր , ի ճեա քո խնայեսցիր .
Ակն յարենէ քումմէ անձ , իշխեմ աղերս արկանել քեզ .
Ապրեցո զիս յարհաւրաց անտի զբողոք իւր լըսելոյ ,
Մի եւ մի դյաւերժականն ինձ ըզթախիձ պատրաստեր ,
Ըզհայրենի ձեռս ի յարիւն որդիական տալոյ մըխել :

ԹԵՍԵՈՍ

Ձիք երբէք, տիկին, ձեռին իմոյ յարիւն իմ շաղախեալ.
 Սակայն եւ ոչ ապաշնորհն ի ձեռանէ իմմէ զերծաւ.
 Յանմահից ուրուք ի դից ձեռն ի կորուստ նորին զինեալ,
 Պիսիդոնի խոստումն է ինձ, եւ խընդրեսցի վըրէժ քոյին :

ՓԵՂՐՍ.

Պիսիդոնի խոստումըն քեզ, զինչ միթէ ուխտք քո զայրագինք...

ԹԵՍԵՈՍ

Եւ զինչ, խիթամ թէ չիցեն ուխտք իմ այնքիկ լեալ լըսելի.
 Արժանահայց մանաւանդ յաւել դու զուխտս իմ յորջորջել.
 Նըկարեսցիր ինձ զեղեռան նորա համայն ըզարութիւն,
 Իբրդեա զզայրոյթ իմ ըզկարի իսկ դանդաղեալ և նըհանջեալ.
 Ոճիրք նորա չեն տակաւին չեն համօրէն քեզ ծանօթք,
 Կատաղութիւն իւր ընդ քեզ զառաձանի ի թըշնամանս.
 Ասէ զըբթունըս քո լըցեալ զըրպարտանօք, եւ վըկայէ
 Բզսիրտ եւ զաջ իւր սիրուհւոյն իւրոյ գրաւեալ Արիկիայ :

ՓԵՂՐՍ.

Եւ զինչ խօսիս, տէր արքայ.

ԹԵՍԵՈՍ

Որ ինչ ասացն ինձ լու ի լու.

Այլ ի հնարից նորա մնտեաց գիտեմ իսկ գուլ անպատրելի.
 Արագ արագ ի Պիսիդեայ ակըն կալցուք հապուցման.
 Զանդըրթելի երդմանց իւրոց ի բագին անդըր նորին
 Երթամ վերըստին ըզկատարումըն թախանձել :

ՏԵՍԻԼ Ե

ՓԵՂՐՍ.

Ելանէ. եւ որպիսի ի լըսելիս իմ ազգեալ լուր,
 Որպիսի բոց առկայծեալ անդրէն ի սիրտ իմ բորբոքի.
 Ո՛հ, երկինք, եւ որպիսի շանթ, որպիսի զտոյց դառնաղէտ.
 Փութայի հասանել բոլորանուէր ի նպաստ որդւոյն,
 Եւ ի բազկաց զարհուրելոյն Ենոնեայ զանձըն թափեալ,
 Տեղի տայի խայթից խըղճի՝ որ զիս լըկէրըն չարատանջ.

Ո՞ր գիտէ, ո՞ւր իսկ ածէր զիս ապաշաւ, մարթ իսկ էր ինձ
 Դատախազել զանձնէ, մարթ էր իսկ ահեղիցըն գաղտնեաց
 Վազել ընդ շուրթն իմ, եթէ ձայն իմ ոչ լինէր հեղձամբղձուկ:
 Իպպոլիտ է զգայուն, եւ առ ի սէր իմ անըզգայ .
 Արիկեաց զսիրտ նորա գրաւեալ, Արիկեաց զաջ նորա գրաւեալ:
 Աւաղ, ո՞վ դիք, յորժամ առ իղձս իմ ապաշնորհն անընկճելի՝
 Ըզգէմ ունէր սէգ ի հայեաց խորոխտեալ ի դէմս ահեղակերպ,
 Կարծէի զսիրտ նորա փակեալ յաւերժաբար առ ի սէր,
 Եւ բոլորից առհասարակ ներհակ իմոցս համասեռից .
 Սակայն կարաց այլ ոք նուաճել յինքն ըզնորին յանդըգնութի .
 Յանկարեկիր աչքս նորա կարաց ոք շնորհքս գըտանել:
 Դիւրագորով թերեւս ի սիրտ՝ իցէ եւեթ ինձ դժկամակ .
 Եւ ընդէր է ինձ ապա ունել կենաց նորին խընամ:

ՏԵՍԻԼ Զ

ՓԵՂՐԱ, ԵՆՈՆԷ

ՓԵՂՐԱ.

Սիրեցեալդ իմ Ենոնէ, գիտիցես զի՞նչ արդ իսկ լըւայ .

ԵՆՈՆԷ

Ոչ, այլ զահի հարեալ զամ առնել քեզ յայտ եւ ոչ սըտեմ .
 Դողացայ նդ խորհուրդ քոյին յոր դէմ եդեալ այսըր գայիր .
 Կասկածէի զի քեզ իսկ գոյր զայրոյթ քոյին աղիտարեր:

ՓԵՂՐԱ.

Եւ ո՞ կարծէր, Ենոնէ, զի գոյր սոտխ ինձ ոք ի սէր:

ԵՆՈՆԷ

Զի՞ ասես .

ՓԵՂՐԱ.

Իպպոլիտ հարեալ ի սէր, չիք տարակոյս .
 Ամէհին այն թըշնամի՝ զոր չըմարթէրըն նըւաճել,
 Ում ծանր էին մեծարանք, ում արտասուք իսկ գըժպըհի,
 Վազր՝ առ որ ոչըն կարէի մատչել երբէք աներկիւղ,
 Հըլու եւ զգօնացեալ ըզպարտութիւն արդ յանձն առնու .
 Արիկիտ եգիտ ըզմուտ ի սիրտ նորա:

ԵՆՈՆԷ

Արիկիտ.

ՓԵՂԻՐԱ

Աղէտք անօրինակ , նորանըջան պահեալ ինձ վիշտ .
 Որ ինչ կրեցի երկիւղ , զայրոյթ , բոց մոլեգին արուփանաց ,
 Սարսափ խրղճի եւ նախատինք անգուծ մերժման անբերելիք ,
 Դուզնաքեայք էին ճաշակք վըշտաց զոր այժմըս կըրեմ :
 Սիրեն զիրեարս , եւ որովք հըմայիւք զաչս իմ պատրեցին .
 Ո՞րպէս եւ երբ եւ ուրանօր երեսեցան իրերաց .
 Գիտէիր դու , եւ առիմէ՞ զիս ի պատրանըս թողուիր .
 Ո՞չ կարէիր ինձ ըզնոցայն յայանել ըզսէր գաղտագողի .
 Լինէի՞ն խօսակիցք ըստէպ միմեանց եւ հետաղօտք .
 Ի խորս անտառաց տայի՞ն նոքա խոյս ի թաքուստ .
 Աւաղ , ազատ համարձակ առնէին այց նոքա միմեանց ,
 Եւ հաճոյ թըւէր երկնից տարփից նոցին անմեղու թիւն .
 Անխիղճ ըզբաղձանաց սիրոյ ըզհետ ընթանային .
 Օր իւրաքանչիւր պարզ եւ պայծառ ծագէր նոցին :
 Իսկ ես տըխուր ընկեցիկ մերժեալ ի բնաւ համագոյից ,
 Խոյս ի լուսոյ տայի ի բաց փախըստական ի տունջենէ ,
 Եւ զմահ եւեթ իշխէի փոխանակ դից յաղերս ածել .
 Դէտակն օրհասին իմում կալեալ ըսպասէի .
 Մաղձ ի ճարակ եւ արտասուք էին փոխան ինձ ըմպելոյ .
 Եւ դէտք յաղէտս իմ առնթեր՝ ոչ իշխէի լալ համարձակ ,
 Զեղերական ըսփոփանացըն դողալով առեալ ճաշակ .
 Եւ ընդ լուրջ կերպարանօք զաղմուկ սըրտի պատրըւակեալ ,
 Ըստիպէի յաճախ իմոցըս ժոյժ ունել արտասուաց :

ԵՆՈՆԷ

Եւ ո՞ր օգուտ իցէ նոցա ի վայրապար տարփից իւրեանց ,
 Ոչ կարացեն նոքա ոչ եւըս տեսանել իսկ զիրեարս :

ՓԵՂԻՐԱ

Այլ սիրեսցեն միշտ ըզմիմեանս . եւ ի խօսել իմում զայս ,
 Ո՞վ խորհուրդ մահառիթ , նոքա զչամբուշ տարփաւորիս
 Ծաղըեն զայրոյթ . թէպէտեւ մնայ նոցա զատչել արսորանօք ,
 Տան բիւր երգմունս իրերաց՝ մի ըզմիմեանըս լըքանել .
 Ոչ ունիմ՝ ոչ՝ ժոյժ ընդ նըսեհ՝ որ թըշնամանս ինձ ածէ .
 Յիս , Ենոնէ . լեր ընդ զայրոյթ սիրոյ իմոյ կարեկից .
 Պարտ է , օ՞ն , կորուսանել զԱրիկիս , եւ զառն իմոյ
 Զարթուցանել ըզբարկու թիւն ընդգէմ արեանն ատելոյ .
 Մի եւ մի գուզնաքեօք շատացի նա պատուհասիւք ,
 Ծանր իսկ յոյժ , եւ քան զեղբարցըն ծանրագոյն քեռն է ոճիր
 Ի բորբոք մոլենախանձ կամիմ հեղուլ առ նա աղերս . . .

Այլ զի՞ գործեմ, ուրանօր յածին միտք իմ մոլորականք .
 Ինձ մոլենախանձ ըզթեսէոս աղերսել,
 Եւ կենդանեաւ առն իմոյ բորբոքել ինձ ի բոց սիրոյ .
 Եւ ընդ ում, զոյր ուրուք իղձք իմ սիրատարի խընդրեն ըզսիրտ .
 Ընդ մէն մի ի խորհրդոց աստի քրատմին հերքս ըզգըլսով .
 Լըցաւ իմոցս այսուհետեւ չափ մեղանաց, եւ գտանիմ
 Կըրկնագատ՝ մըծըղնեայ համանգամայն եւ զըրպարտիչ .
 Մարդաստոշոշ ձեռք իմ պատրաստք լինել անձին քինախընդիր,
 Յանկան մըխիլ յարիւն անմեղ, եւ ես կեցից, հէք եւ թըշուառ,
 Հանդուրժեցից արփուոյն սըրբոյ՝ յորմէ սերիմս ի տեսիլ .
 Նախահայր նա ինքն է իմ հայրն եւ իշխան դիցն ամենից,
 Երկինք եւ տիեզերք համայն իմովք լի են նախնեօք .
 Ո՛ւր թաքեայց, փախիցուք ի գիշեր անդըր դըժոխոց .
 Այլ զի՞նչ խօսիմ. հայրն իմ ունի անդ ըզսափորն օրհասական,
 Զայն յանաչառ ձեռքս նորա վիպեն եղեալ ճակատագրին .
 Ինքն ի դըժոխս անդ Մինոս դատի զդըժգոյն ազգ մահացուաց .
 Աւաղ, եւ իբր ըզդողանի հարցի ըստուեր իւր զարհուրեալ,
 Ի տեսանել զառաջեաւ իւրով ըզդուստր իւր ինքնագատ
 Զայնքան ազգի ազգի մեղանս ի յանձն առեալ, եւ մեղանս՝
 Որ ի դըժոխս իսկ անդ չիցեն թերեւս եկեալ յականջալուր .
 Զի՞նչ ի տեսիլն յայն սոսկալի զի՞նչ յայնժամ, հայր իմ, ասիցես .
 Թըլիմ տեսանել ի ձեռանէ քու միջ անկեալ
 Ըզսափորն ահաւոր, թըլիմ ըզքեզ անդ տեսանել
 Նորահնար պատուհասի հետազօտեալ ի խընդիր,
 Եւ քեզէն քոյոյ արեանդ եղեալ դահիճ : Ներեա ինձ .
 Զանողորմ աստուածոյն՝ որ զազգատոհմ քոյին կորոյս՝
 Ծանիր ըզվրէժ ի մոլեգին զայրոյթ դըստերըդ քոյոյ .
 Ըզդըժընդակ եղեռնութեանն՝ ոյր հալածէ զիս ամօթ՝
 Ոչ երբէք սիրտ իմ տըխուր, աւաղ, զարդիւնսըն ժողովեաց .
 Հալածեալ յաղիտից մինչեւ ի շունչ իմ ի յետին,
 Զրաւեմ տառապանօքս այսու զկենցաղ տարժանաւոր :

ԵՆ ՈՒՆԷ

Թո՛ղ անդր ի բաց, դըշտոյ տիկին, ըզտարապարտ արհաւիրս .
 Այլազգ ի ներելի վըխակ քոյին ականարկեսփիր .
 Սիրեա դու, զի զդէմ ունել չէ մարթ բընիկըն պայմանի .
 Յանհրաժեշտ ի հմայից ձըգեալ ի քարչ ածար ի դոյն .
 Նորանըշան ինչ եւ հրա՛ջք թերեւս իցեն անլուր առ մեզ,
 Իցէ թէ քեզ միայնում յաղթանակեաց մինչեւ ցարդ սէր .
 Տըկարութիւն ի բնութենէ տըւաւ բաժին մահացուի .
 Բախտին մահկանացուաց մահկանացուդ լեր հըպատակ :
 Բողոքես ըզլըծոյ որ ի վաղուց եղեալ բնաւից .

Դիք ինքնին բնակեալք յՈլիմպ, դիք որ ի վրէժ եղեռան
Արհաւիրս որոտընդոստ ըսպառնալեօք արկանեն,
Ի սէր անարժան երբէք երբէք բորբոքեցան :

ՓԵՊՐԱ

Զինչ լըսեմ, որպիսի խրատ իշխես դու ինձ մատուցանել .
Այսպէս ուրեմն կամիս ապականել զիղծս իմ ի սպառ .
Վատչուէր դու, տես որով օրինակաւ զիս կորուսեր .
Դու դարձուցեր ինձ ըզլոյս՝ յորմէ ի բաց խուսավէի .
Թախանձ քոյին ետ ինձ ըզպարտս իմ արկանել ի մոռացօնս .
Խոյս տայի յիպպոլիտեայ . դու զնա ետուր ինձ տեսանել .
Զի՞ փոյթ էր քեզ, եւ ընդէր իշխեսաց բերան քո ամպարիշո
Չարախօսել ըզնըմանէ եւ արկանել կեղտ ըզնովաւ .
Գուցէ մահու իսկ մեռանել նըմա այդուիկ հասանիցէ,
Եւ ցնորելոյ հօրն ուխտ անսուրբ լիցի թերեւըս լըսելի :
Ոչ եւրս քեզ, ոչ լըսեմ. կորիր հըրէշ զարհուրելի,
Կորիր, եւ թող ինձ ըզհոգ աւաղելոյ իմոյս բախտի .
Երկինք արդարադատ զարժանն քեզ հատուցեն,
Եւ պատուհաս քոյին լիցի յահ եւ յերկիւղ ամենեցուն,
Որք զիշխանաց չարաբաստից տածեալ ըզկիրս իրբեւ ըզքեզ,
Եւ հրապուրեալ ըզնոսա վատախորհուրդ ճարտարութեամբ
Մըղեն ընդ զառ ի վայր՝ յոր սիրտ նոցին է գիւրամէտ .
Ռահ ի յեղեռն իշխեալ հորդել նոցա շողովք ժանտաժուտք,
Երկնաւոր ցասմանն ընդդէմ արքայից սաստք աղիտագոյնք :

ԵՆՈՆԷ (Միայնա)

Ո՛հ զամենայն ինչ գուն գործեալ, յամենայնէ հրաժարեալ
Ի սպաս նորա, սվ դիք, եւ զայս ընդունիմ վարձ իրաւ ապէս :

ՀԱՆԴԷՍ ՀԻՆՓԵՐՈՐԴ



ՏԵՍԻԼ Ա.

ԻՊՊՈԼԻՏ, ԱՐԻԿԻԱ, ԻՍՄԵՆԷ

ԱՐԻԿԻԱ.

Ո՞րպէս, եւ լըռիցես յանհընարին դու ի վտանգիդ,
 Եւ թողուցունս ի պատրանս ըղձայր ի սէր քո խանդակաթ.
 Անագորոյն դու, թէ զիմոցս արհամարհեալ գուժս արտատուաց,
 Յանձն առնուս անկարեկիր ոչ եւրս զիս տեսանել,
 Ե՛րթ, թո՛ղ տըխուր զԱրիկիա, այլ ի մեկնել քո ի նմանէ
 Գէթ խնամեսջիր ըզկեանքս քո կացուցանել աներկեան,
 Ամբացո զհամբաւ քոյին յամօթապարտ ըսագըտանաց,
 Եւ ստիպեսջիր ըղձայր քո զուխտ իւր յետս անդրէն դարձուցալ
 Չեւ եւրս չեւ է տարաժամ. էր աղագաւ եւ որո՞վ [նել.
 Մըտահաճոյ խորհըրդով թողուս ազատ դու ասպարէզ
 Դատախազին քում, զերծո ի պատրանաց ըզթեսէոս :

ԻՊՊՈԼԻՏ

Է՛հ, զի՛նչ իսկ ոչ խօսեցայ. էր ինչ ինձ պարտ ածել ի լոյս
 Ըզթըշնամանս առագաստի նորա, եւ էր իսկ արժան
 Անկեղծ ի վէպքս գուցայդ վայր, եւ դըժպատեհ ամօթով
 Ծածկել ըզդէմս հօր. դու եւեթ գիտակ գաղտնեացն ես ատեւ
 Չկարեմ բանալ ումեք ըզսիրտ իմ բաց ի քէն բաց ի դից. [լեաց.
 Ոչ կարացի ծածկել ի քէն, աստի ըզսէր իմ առ ի միտ,
 Որ ինչ յանձնէ իսկ կամէի ծածկել. այլ ան ըզմըտաւ
 Ընդ որպիսի գաղտնեօք հանի քեզ զայն ի վեր, դուստր արքու
 Մոռացիր, թէ իցէ հնար, զի խօսեցայ քեզ զայնմանէ, [նի:
 Եւ մի երբէք բացցին շըրթունք քո անտըխեղձք առ ի պատմել
 Չարկածըն սոսկալի. յարդարութիւն գիցն յուսացուք,
 Կարի իսկ փոյթ լիցի նոցա զիրաւունս իմ հանել ի լոյս.
 Եւ Փեղրա ըզվրէժ մեղացըն տացէ վաղ կամ անագան,
 Եւ ոչ խուսել կարացէ յարդար նոցին նախատանաց:
 Չայս եւեթ պահանջեմ ի քէն ըսպաս մեծարանաց.

Զայն ամենայն համարձակ ներեմ իմումըս զայրացման .
 Ե՛լ ի քումմէ գերութենէդ , լեր ուղեկից ինձ ի փախուստ .
 Խրախոյս ըզհետ իմ առեալ ել ի ժանտ ի պիղծ վայրաց աստի ,
 Ուր լաւութիւն զապականիչ շնչէ այեր չարութեան :
 Գաղտագողի քումըդ հապճեպ փախըստեան ժամ բարեպատեհ
 կալ քեզ զաղմուկըն զոր արկածք իմ աստանօր յարուցանեն .
 կարող իսկ եմ ապահովել քեզ ըզհընարըս փախըստեան ,
 Յինէն եւեթ ցարդ ի վերայ քո հըսկէ պահ , եւ հըղօրք
 Դատիս մերում կացցեն պաշտպանք . Արդոս մեզ աջ կարկառէ ,
 եւ հրաւիրէ Սպարտա ըզմեզ . զիրաւացի բողոք մեր
 Առ բարեկամս երկաքանչիւրցս առ հասարակ հասուցուք .
 Մի՛ ներեցուք զի ըզնըշտարըս մեր Փեղրայ ժողովեալ ,
 ի հայրենի աթոռոյ մերժեացէ զմեզ երկաքանչիւր ,
 եւ խոստացի որդւոյ իւրում ըզկողոպուտ իմ եւ ըզքօ :
 Պատեհ չըքնաղ մեզ առաջի կայ , ընկալցուք զայն ... այլ զի կաս ,
 Զի վարանիս , շահ քո եւեթ ազդէ յիս զայս յանդըզնութիւն .
 Մինչ ես ի հուր բորբոքիմ , առ ի՛նչ դու կաս ցրրտասառոյց :
 Երկընչիցիս դու , չիշխիցես ըզհետ իմ գալ ի յաքսոր :

ԱՐԻԿԻՍ

Աւաղ , աքսոր այդպիսի է իսկ և է ինձ ցանկալի .
 Քանի զմայլմամբ սիրոյ մարթէր ինձ , տէր , զօդեալ ընդ քեզ՝
 ի մոռացօնս ի բնաւից այլոց անկեալ ի մահացուաց . [կեալ
 Այլ առանց քաղցրը զօդիւն այնուիկ ընդ քեզ կըցորդելոյ ,
 Իցէ՞ ինձ մարթ պատուով ըզհետ քո ելանել գաղտագնաց .
 Գիտեմ զի սողիւտ եւ ոչ մի զանրըծագոյն անուամբ ածեալ՝
 կարիցեմ ի ձեռաց հօր քո փախըստեամբ ազատանալ ,
 Ոչ ի ծոցոյ ծնողաց իմոց լիցի այնուիկ ինձ խուսափել .
 Փախուստ օրէն է որոց խոյս տան յերեսաց բրձնաւորաց .
 Այլ դու սիրես զիս , տէր , եւ փառք իմ աղմըկեալ յերկիւղէ .

ԻՊՊՈՒԻՏ

Ոչ , ոչ , կարի իսկ ըզքումմէ համբաւոյ հոգ է ինձ եւ խնամ .
 Ազնըւագոյն եւրս խորհուրդ առաջնորդէ ինձ այսր առ քեզ .
 Փախիր ի թըշնամեաց , եւ եկ ըզհետ փեսայիդ .
 Ազատք յաղէտըս մեր , զի այս առ մեզ երկնից է հրաման ,
 Իցեմք ինքնիշխան մատուցանել աջ իրերաց .
 Ոչ թէ Հիմեն ի հարսնաւէր շըրջապատի միշտ ի ջահից .
 Մերձ ի Տրեզէն ի շիրիմս՝ ուր արքայից նախնեացն իմոց
 Են վաղէմի գերեզմանք , յառնէ մեհեան դիցանըէր
 Ահարկու սըտերգմանց , ուր ոչ իշխէ երդնաւ ոք սուտ .
 Ուրանօր ուխտագրութըն նոյնհետայն պատու հասի .



Եւ սըտուծիւն անհրրաժեշտ մահուն ասիւ տագնապեալ,
 Ոչ այլով իւիք սանձիւ նուաճի քան զայն զարհուրելեալ :
 Անդրբ, թէ դու ինձ հաւանիս, գնասցուք կըռել հանդիսիւ
 Յաւերժ սիրոյ ուխտ՝ ի վրկայ կոչեալ ըզդիս որ անդ պաշտի .
 Անդ նըմա երկաքանչիւր աղերս արկցուք գու մեզ ի հայր .
 Զաստուածոց գերագունից ի դիս զանուն անդ կարգացից .
 Եւ զսրբբասէրըն զԱրտեմիս, եւ զվեհափառն Օդոյի .
 Եւ դիք առ հասարակ վրկայք իմոցըս տարփանաց,
 Հաստատուծեան խոստմանց իմոց սրբբոց լիցին երաշխաւորք :

ԱՐԻԿԻԱ

Ահա արքայ գայ, փախիր արքայորդիդ, եւ վաղընդփոյթ .
 Առ ի ծածկել զերթ իմ՝ կացից մնացից վայրիկ մի ես աստէն .
 Ե՛րթ դու, թողեալ զոք ի քոյոցդ ինձ ուղեցոյց հաւատարիմ,
 Ահընդահ ընթացից իմոց առ քեզ առաջնորդել :

ՏԵՍԻԼ Բ

ԹԵՍԷՆՍ, ԱՐԻԿԻԱ, ԻՍՄԵՆԷ

ԹԵՍԷՆՍ

Վրդովելոյ մըտաց իմոց լոյս տուք, ո՛վ դիք, հաճեցարուք
 Զոր խընդրեմս աստանօր ցուցանել ինձ ճըշմարտուծիւն :

ԱՐԻԿԻԱ

Խորհեաց քաջ, իմս իսմենէ, եւ լեր պատրաստ ի փախուստ :

ՏԵՍԻԼ Գ


ԹԵՍԷՆՍ, ԱՐԻԿԻԱ

ԹԵՍԷՆՍ

Այլագունեալ դէմք քոյին, եւ թուիս դու ինձ հարեալ ի խռով,
 Զինչ աստանօր իսկողիտ գործէր, դըսարիկ արքայենի :

ԱՐԻԿԻԱ

Ի հրաժեշտ յաւերժական տայր ինձ ողջոյն, տէր արքայ :



ԹԵՍԷՈՍ

Գիտացին աչք քո նըւաճել զարիութիւնն անընկճելի .
Ըզնախընծայ տարիկց նորին աջողեաց քեզ զիղձըս գրաւել :

ԱՐԻԿԻՍ,

Տէր արքայ , չկարեմ զիրացըն քեզ ժըխտել ճըշմարտութիւն .
Տարապարտ ատելութեանըդ քո չեղել նա ժառանգորդ .
Այո՛ չվարէր նա ընդ իս իբր ընդ ումէք յանցաւորի :

ԹԵՍԷՈՍ

Ծանեայ , երգնոյր քեզ սէր յաւերժ . այլ ի յողորդ սիրտ նորին
Մի վըստաճիր , ոյր ըզնոյն երգումն այլոց իսկ չէ խնայեալ :

ԱՐԻԿԻՍ,

Ո՛յր , տէր արքայ :

ԹԵՍԷՈՍ

Չէր պարտ յողորդ եւս ըզնա քեզ կացուցանել .
Իբր ունէիր ժոյժ գըժնէիդ այդմիկ ի փորձ բաժանման :

ԱՐԻԿԻՍ,

Եւ իբր ունիս դու ժոյժ խօսից գըժընդակաց՝ որ ստուերած
Այնպիսումն իշխենն ածել գեղեցկափայլ կենցաղոյ .
Այդպէս ծանծա՞ղ է ճանաչել քոյինն ըզսիրտ իպլուղիտեայ ,
Այդպէս մըռայլ ընտրել քոյինն զանմեղութիւն յեղեռանէ .
Իբր ի քոյոց եւեթ աչաց գողանայ ամպ ոխերիմ՝
Ըզլաւութիւն ակներեւ ամենեցուն լուսափայլեալ .
Խիստ է քեզ մատնել ըզնա , աւա՞ղ , շըրթանց նենգաւորաց .
Դադարեա ստըրջացիր յորդեկորոյս ուխտից քոյոց .
Երկիր դու , տէր արքայ , երկիր զի մի երկինք արդարադատ
Առ ատել ըզքեզ լուիցեն եւ ընկալցին զուխտըս քոյինն .
Յաճախ ի վըէժ ցասման երկնից զո՛հք մեր լինին ընդունելի ,
Պարգեւք նորին յաճախ մեղաց մերոց տըւեալ ի պատուհաս :

ԹԵՍԷՈՍ

Մի այդպէս մի , զուր դու ջանաս ծածկել զեղեռըն նորա ,
Կուրացեալ ի սիրոյ ապաշնորհին . են ինձ վըկայք
Ըստոյգք եւ անըստգիւտք , տեսի անկեղծ ուղիս արտասուաց :

ԱՐԻԿԻՍ,

Ըզգոյչ անձին լեր , տէր արքայ . անյաղթելի բազուկ քոյինն

Զերծոյց զերկիր յանթիւ հրէշից , այլ սպառեցեր ոչ զայնոսիկ ,
 Դեռ կենդանի թողեր ըզմին . . . որդի քոյին , տէր արքայ ,
 Արգելու ինձ չասել ինչ այլ . եւ թէ ասել ինչ յաւելից ,
 Տաց նրմա վիշտ մե՛ծ՝ քաջ գիտակ մեծարանաց նորին առ քեզ :
 Պատկառանօք իբրեւ ըզնա խոյս յերեսաց քոց տամ ի բաց ,
 Զի մի եւ մի լուծանել ըստիպեցայց ըղլըռութիւն :

ՏԵՍԻԼ Դ

ԹԵՍԷՆՍ

Զինչ ի մլտի իւրում կայցէ , եւ զինչ ծածկեալ ընդ բանիւք
 Զոր այնքանիցս ըսկըսեալ եւ միշտ թերի զայնրս թողոյր .
 Գուցէ երբէք ընդունայն կեղծեօք պատրել զիս կամիցին ,
 Համախոհք երկաքանչիւր առ ի ճրգել զիս ի տագնապ :
 Այլ ընդէր բողոք ընդդէմ դըժնեայ խմումըս խըստութեան
 Ի խորոց աստի սըրտիս ողբաձայնեալ գոչէ առ իս .
 Գութ լըռելեայն վիշտ եւ զարմանըս ներգործէ ի յիս համայն .
 Բէր ի հարցփորձ միւսանգամ առցուք զիրացըն զԵնոնէ ,
 Հանգամանաց եղեռնութեանըն համօրէն կալ ի վերայ .
 Թիկնապահք , ելցէ առ մեզ Ենոնէ այսըր միայնակ :

ՏԵՍԻԼ Ե

ԹԵՍԷՆՍ , ՊԱՆՈՊԷ

ՊԱՆՈՊԷ

Ոչ գիտեմ զինչ խորհուրդ ի միտըս դըշխոյին յածի , արքայ .
 Զամենայն ինչ կասկածեմ ի կրից անտի՝ յոր տագնապի .
 Անյուսութիւն օրհասական յայտնեալ ի դէմըս նորին ,
 Եւ դալուկն ըզնովաւ մեռելատիպ արդէն սրփռեալ .
 Նախատանօք յերեսաց նորա ի բաց հալածական
 Ենոնէ ծովամոյն կորեալ ի խորս անդ իւրովի ,
 Ոչ ուրուք ըզմոլեզին խորհըրդոյն զուստըն գիտելով .
 Եւ զնա ալքք յափըշտակեալ յաչաց յաւերժ ընկլուզին :

ԹԵՍԷՆՍ

Զինչ լուսեմ .

ՊԱՆՈՊԻ

Մահ նորա ոչ ցածոյց ըզմիտըս գըշխոյին ,
 Թըւի աղմուկ ի վարանեալ սըրտին եւ եւրս զայրանալ .
 Է զի յողոք զանխուլ վըշտացն առեալ զորդիս իւր ի գիրկ ,
 Արտասուօք թանայ զնոսին . եւ զմայրենի ապա յանկարծ
 Թողեալ ըզգուժ՝ զարհուրանօք մերժէ զնոսա յանձնէ ի բաց .
 Դեգերեալ տարտամ զնացիւք յածի ուր ոտք իւր բերին .
 Եւ աչք իւր մուրրեալ՝ ոչ եւս ի մէնջ զոք ճանաչեն :
 Երիցըս ձեռն էարկ ի գիր , եւ ի մըտաց իւրոց անդրէն
 Երիցս ապա յեղաշըրջեալ՝ հերձ զըսկըսեալ նամականին .
 Հաճեաց առնել նըմա այց , տէր արքայ , հաճեաց օգնել նըմա :

ԹԵՍԷՈՍ

Ենոնէ ծովահեղձոյց . Փեգրա ի մահ մըտաբերեալ .
 Ո՛վ դիք , կոչեսցի հապա որդի իմ այսր առ իս ,
 Եկեսցէ Իպպոլիտ տալ ընդ անձին պատասխանի ,
 Եկեսցէ խօսել զանձնէ , ահաւասիկ կամ ի լըսել :

(Մխայնակ)

Մի վաղվաղեր ըզմահառիժ պարգեւըս քո , ո՛վ Պիսիդ .
 Իցիւ ոչ եւրս լըսելի եղէց ի քէն մինչ ի սպառ .
 Գուցէ վկայից կեղակարծից եղէ կարի դիւրահաւան ,
 Գուցէ կարի հապճեպ զանգուժ առ քեզ ըզձեռս իմ ամբարծի .
 Աւա՛ղ , քանի՛ աղէտաւոր լիցին ուխտիցս արգասիք :

ՏԵՍԻԼ Զ

ԹԵՍԷՈՍ , ԹԵՐԱՄԵՆ

ԹԵՍԷՈՍ

Դո՛ւ իցես , Թերամենէս . զի՞ ընդ որդի իմ արարեր .
 Քեզ անդըստին ի սկըզբնաբոյս տիոց ըզնա յանձնեցի .
 Այլ առիմէ՞ այդոքիկ հեղեալ յաչաց քոց արտասուք .
 Զի՞ զողջունէ որդւոյ իմոյ գաս դու բերել առ իս զըրոյց :

ԹԵՐԱՄԵՆ

Ո՛վ տարաժամ հոգ , ընդունայն խընամ , ո՛վ գուժ ի նանիր .
 Ոչ եւս է Իպպոլիտ .

ԹԵՍԷՆՈՍ

Ո՛վ ԴԻՔ :

ԹԵՐԱՄԵՆ

Տեսի մատնեալ ի մահ

Ըզսիրելին քան զամենայն ոք , եւ իշխեմ իսկ , տէր արքայ ,
Յաւելուլ ասել զանպարտն ի մէջ բնաւից մահկանացուաց :

ԹԵՍԷՆՈՍ

Ոչ եւս որդեակն իմ կենդանի . ո՛հ եւ ընդէր վաղվաղեցին
Անժոյժ ըզմահ իւր դիք , ուր ես մնայի նրմա գիրկս արկանել .
Ո՞ր շանթ ըզնա յեղակարծ , ո՞ր իսկ հարուած յափըշտակեաց :

ԹԵՐԱՄԵՆ

Այն ինչ ի դրանց աստի Տրեզնն քաղաքի եւ նա ընդ մեզ
Բազմեալ ի կառս անդ իւր , կային ըզնովաւ լուռ իբրեւ ըզնա
Թիկնապահք թաղծեալ , եւ գնայր դէպ ի Միկէնըս մըտայոյզ ,
Թողեալ ի ճօճ ըզձիովք զերասանակսն տատանեալ .
Սօս երիվարք , որք լի երբեմն ի վեհ աշխոյժ կառավարեալ ,
Արդ կորագլուխ տըխրահայեացք՝ թուէին նրմա գոլ վըշտա-
Չայն ահագին եւ ի խորոց ծովուն , այերք պըղտորեցան . [կիցք .
Եւ ի ծոցոյ երկրի հընչեաց եղերածայն զարհուրելի
Առ բարբառն ահարկու պատասխանեալ հեծեծելով .
Արիւն ի սիրտըս մեր պաղեալ , եւ ի յայթիւ կացելոց
Քըստմնեցան բաշք երիվարաց . ի մըկանունս անդ լոյծ դաշտին
Յորձնեռանդն յայնժամ ի վեր ամբառնայր լեառն ջրակուտակ :
Մատեան ալիքն , եւ փըրփրադէզ բեկտեալ ի դուրս ժայթքէին
Հրէշ կատաղի՝ սպառնող եղջերքք զինեալ ի լայն ճակատուն ,
Զրահամորթ ծածկեալ իրանն ամբողջ ի թեփ դեղնաշորթ .
Յուլ ամեհի , վիշապ անաստ , ի ծամածուռ քընթըռնոց
Ի թեք գաւակ իւր գալարեալ . եւ սարսէին ծովեզերք
Ի մըռընչել գազանին երկարածիգ ի մըռընչիւն :
Երկինք ընդ հրէշն վայրենի պակեան , երկիր սարսեցաւ ,
Պըղծեցան օդք . ծով որ ըզնայն ած՝ ընկըրկէր ահաբեկեալ .
Եւ բնաւք փախեան , ոչ ոք յու մալէտ արիութիւն խրախուսեաց .
Ի մեհեան անդրը մերձակայ անկան բընաւք ապաստանել :
Իպպոլիտ եւեթ՝ զաւակ արժանաւոր դիւցազին՝
Կացոյց ըզձիս . բուռն ի գեղարգն հարեալ , ի հրէշ անդրը դի-
Ի շեշտակի հարուած բանայր խոց լայնատարր ի կըշտին : [մեալ ,
Ի զայրոյթ եւ ի կըսկիծ նըհանգն ի վեր ընդոստուցեալ ,
Եկն առաթուր երիվարացն անկաւ անդէն մըռընչելով .

Եւ թաւալգլոր ըզբոցաշունչ որկորն ի դէմս ամեալ նոցին ,
 Ընկլոյզ ծածկեաց ըզձիանն ի հուր ի ծուխ եւ յապաժոյժ .
 Ահ ըզնոսա խռովեցոյց , եւ խուլ յայնժամ եւեթ վարչին՝
 Հեստեալ սաստից եւ շրուշակաց , մինչ նա զբաջան տազնապէր ,
 Ներկանէին կարմիր ըզսանձս յարիւնախառն ի փրփուր :
 Ասեն տեսեալ իսկ յահագին աղմբի անդ զոք ի դից ,
 Մըտրակ ի կուշտրս փոշելից երիվարացն առնելով :
 Վարէ ընդ ժայռս ահ ըզնոսա . ճռնչեալ լիսեռնն բեկանի .
 Ինքն իպպոլիտ անվեհեր դէտակն ի կառսն խորտակեալս ,
 Եւ ի բեկորս ընդ օդս ի թիւ . անկանի նդ սանձսն խառն ի
 Անողորմս այս տեսարան , ներեա իմուճրս վըշտի , [խուռն :
 Լիցի աղբիւր ինձ յաւերժից լալեաց . տեսի , տէր արքայ ,
 Տեսի զորդին քո հէք ձրգեալ ի ձեռասուն ձիոցն ի քարշ .
 Յետս ըզձիանն կոչէր , նոքա սաստիւքն սարտուցեալ
 Գնային սրարշաւ . թաթաւէր համակ ի վէրս իրանն ողջոյն :
 Հընչեաց դաշտավայրն յաղիողորմ աղաղակ մեր .
 Բուռն ապա թափ նոցին մեղմեալ ըզկայ առին ոչ ինչ հեռի
 Ի վաղեմեացըն շիրմաց՝ ուր թագազանց հաւուց նորին
 Պահի աճիւն ցուրտ . դիմեցի ես անդր յոգւոց հանելով ,
 Անդր եւ թիկնապահք նորա ըզհետ իմ հասին ,
 Հետք ճապաղեաց արիական արեանն մեզ առաջնորդեալ .
 Ժայռք ի նոցունց կարմրաներկք , փուշք եւ մացառք արիւնա-
 Ըզկապուտ բոսորատիպ վարսիցն յինքեանըս բերէին : [Թորք
 Հասի առ նա , ձայն ետու . եւ կարկառեալ նա աջ առ իս ,
 Եբաց վայրիկ մի զառկայծեալ ակն եւ անդրէն փակեալ , ասէ .
 Երկինք զանմեղ կեանս իմ բառնան , ո՞վ սիրեցեալդ Թերամեն ,
 Յանձանձեսջիր յետ մահուս ըզվըշտացեալն Արիկիա .
 Եւ թէ երբէք հայրն իմ զերծեալ յաւուր միում ի պատրանաց ,
 Ողբայցէ զանպարտակիր աղէտս որդւոյն , գոգջիր նըմա
 Առ ի զբողոք արեան իմոյ եւ զըստուերաց ցածուցանել ,
 Զի քաղցրութիւն արասցէ ընդ գերուհւոյն , տացէ նըմա
 Եւ աստ դիւցազն անշընչացեալ՝ դիակն եւեթ անկերպարան
 Եթող ի գիրկս իմ յաղթանակ տըխրատեսիլ դիցըն ցասման ,
 Զոր եւ ոչ ակն հայրենի ըզնա կարող էր ճանաչել :

ԹԵՍԵՆՍ

Որդեակ իմ , յոյս իմ ցանկալի , զոր ես ինձէն կորուսի .
 Դիք աննըւէրք , որոց կարի ուխտք իմ եղեն լըսելի .
 Որպիսի զիղջ մահառիթ ընդ բոլոր կեանս իմ ինձ պահեալ :

ԹԵՐԱՄԵՆ

Անդր Արիկիա եհաս յայնժամ ահընդահ .

Եւ գայր նա ի ցասմանէ քու մտէ խուսեալ, տէր արքայ,
 Առաջի գիցըն բագնաց լինել նրմա ի հարսնութիւն .
 Մատեաւ, ետես ըզգաշտորայն արիւնաներկ եւ ճըխաշունչ .
 Ետես, եւ ո՛վ աղիողորմ տեսիլ աչաց սիրուհոյ,
 Գետնատարած անդ զխպպոլիտ անկերպարան եւ գըժգոյն .
 Կամէր վայրիկ մի զաղետից իւրոց յերկբայս անկանել .
 Եւ ոչ եւս ըզսիրելին իւր ըզգիւցազնն ծանուցեալ,
 Տեսանէր զխպպոլիտ եւ ըզնա ինքն հետազօտէր .
 Այլ ուր ուրեմն աներկբայ՝ զի նա անկեալ կայր առ իւրեւ,
 Տըխուր ակնարկեալ՝ բողոք ըզգիցն էարկ, եւ ցուրտ
 Եւ դառնահեծ եւ կիսամեռ անկաւ նուաղեալ առ սիրելոյն :
 Կայ առ նրմա իսմենէ, իսմենէ լայ եւ արտասուէ,
 Ըզնա ի կեանքս կոչելով կամ ի յաղէտքս մանաւանդ .
 Իսկ ես գարշեալ ի կենաց՝ ըզգիւցազինն իղձըս վերջին
 Եկի պատմել քեզ, տէր արքայ, եւ զգըժընդակըս զայս պաշտօն
 Զոր ի պարզել ոգւոցն արար յիս ապաստան՝ եկի լնուլ :
 Այլ տեսանեմ զոխերիմ ոտխ նորին զի այսըր գայ :

ՏԵՍԻԼ Է

ԹԵՍԷՈՍ, ՓԵԴՐԱ, ԹԵՐԱՄԵՆ, ՊԱՆՈՊԷ,

ԹԻԿՆԱՊԱՀԲ

ԹԵՍԷՈՍ

Է՛Տ, քաջիկ քեզ յաջողեաց յաղթանակել, եւ աւասիկ
 Զրաւեալ որդեակն իմ ի կենաց . ո՛հ, զի ի ճահ է ինձ խիթալ .
 Եւ կասկած անողորմ ոչ տարապարտ աղմըկէ զիս,
 Ի սրբոտի իմում ըզնա անդատապարտ առնելով :
 Այլ նա ոչ եւս է կենդանի, ճենճերեսցի զո՛հ քո տիկին .
 Եւ ի կորուստ նորին բերկրեա, թէ յանիրաւ թէ յիրաւի :
 Հաւանիմ զի իցեն աչք իմ ըմբըռնեալ յար ի պատրանս .
 Յանցաւոր ըզնա դատիմ քո իսկ ըզնա ամբաստանեալ .
 Մահ նորա մատուցանէ հերիք պատճառս ինձ արտասուաց,
 Չեն ինձ պէտք հետազօտել տեղեկութիւնքս գըժպըհիս,
 Որ ապիկարք իրաւացի ցաւոցս ըզնա հատուցանել,
 Յաւելցեն թերեւս աղէտս ինձ ի վերայ աղետից :
 Թող ինձ, հեռի ի քէն, հեռի ի ծովեզերց յայսցանէ,
 Խոյս յարիւնուռչտ տալ ի ստուերէ որդւոյ իմոյ կեղեքելոյ .
 Կոր ի գլուխ ի մահառիթ խըղձէ մըտաց հալածական,
 Յանկայի գնալ ի հանուրց տիեզերաց վըտարանդի .

Համագոյք եղևոնութեանս իմում՝ ընդդէմ թուին յառնել,
 Եւ շուք անուան իսկ իմոյ ածէ ծանր եւս ինձ պատուհաս .
 Անձանօթ ի մարդկանէ լաւ եւ ըս գոյր ինձ թագչել .
 Ատելի են ինձ խընամք իսկ՝ որով դիք զիս մեծարեն ,
 Մեկնիմ՝ գընամ աշխարել ըզնորհ նոցին մարդախոշոշ ,
 Ոչ եւս աշխատ զոք ի նոցունց արարից յուխտս ի մնտիս .
 Որ ինչ եւ շնորհս ինձ առնիցեն , դըժխեմ նոցին բարութիւն
 Ոչ զօրեօցէ հատուցանել զոր ինչ բարձին յինէն ի բաց :

ՓԵՒՐԱ

Մի թեսէ , պարտ է լուծանել արդ զանիրաւ լուութիւն .
 Պարտ է որդւոյ քում զիւրն անդրէն հատուցանել անմեղութի .
 Զէր իսկ եւ չէր նա մեղապարտ :

ԹԵՍԵՈՍ

Աւաղ հիքիս ինձ հօր եղուկ .

Ահաւատչեաւ վըկայութեան քո արարի զնա դատապարտ .
 Եւ կարծիցես դու այդուիկ արդարանալ , ո՛ր անողորմ :

ՓԵՒՐԱ

Կարճին վայրկեանք ինձ , լուր թեսէ , ես ինքն յորդի քո զգաս-
 Ես ինքն յորդի քո ի պարկեշտ իշխեցի ակըն մըծըղնեայ [տասէր,
 Ակն արկանել ի նա յայրատ , հուր եւեթ ժանտ արկ յիս երկին .
 Ապիրտան Ենոնէ զայլն ամենայն նիւթեաց չարիս .
 Երկեաւ զի մի Իպպոլիտ մոլեգնութեան իմոյ գիտակ
 Ի վեր ըզհուրըն զայն հանցէ որ արկանէր սոսկումն ի նա :
 Զեղծեալ իմովրս նենգաժետն անհընարին տըկարութեամբ ,
 Յունկըն քոյին աճապարեաց չարախօսել ըզնրմանէ .
 Այլ ըզչարեացն ելոյծ ըզվրէժ . ի ցասմանէ իմմէ խուսեալ ,
 Քաղցրագոյն յոյժ պատուհաս խընդրեաց յալիս անդ ծովու :
 Վաղ իսկ ըզբախտ իմ սահմանեալ էր ապաքէն երկաթոյ ,
 Այլ հեծելով տայի հեծել անմեղութեան ի կասկածանս .
 Կամեցայ զխիղճ իմ առաջի քո մերկանալ յառաջագոյն ,
 Եւ ապա էջս ի դըժոխս ընդ յամրագոյն առնել ուղի .
 Ընկալայ , ի բոցակէզ անդր յերակունս իմ հեղի
 Ըզչարաթոյն առ ի Մեղեայ երբեմն ածեալ ի յԱթէնս .
 Արդէն դեղոյն այնորիկ ազդումն ի սիրտ իմ ժամանեալ ,
 Յօրհասականս յայս ի սիրտ ազդէ սարսուռ իմն անձանօթ .
 Արդէն մէգ զարտեւանամբքս անկեալ՝ աղօտ նըչմարեմ
 Զերկին , եւ զայր իմ յերեսաց աստի իմոց թըչնամանեալ .
 Եւ մահ յաչաց իմոց բարձեալ զարեւ ի բաց , հատուցանէ
 Լուսոյ՝ զոր աչք իմ պըղծէին՝ ըզսըրբութիւն իւր անարատ :

ՊՍՆՈՊԷ

Տայ զունչ յեփն , տէր արքայ .

ԹԵՍԵՈՍ

Այնքանոյ ժանտ եղեանութեան

Ընդէր ընդ կեանքս նորին ոչ մեռանի եւ յիշատակ :

Օ՛ն երթիցուք , յոյժ իսկ , աւանդ , ածեալ վրիպակ իմ ի լոյս ,
Խառնել արտօսը ընդ արեան շարաբաստիկ որդւոյ իմոյ .

Ըզսիրելոյ որդւոյս նըշխար օ՛ն երթիցուք ողջագուրել ,
Քաւել զուխտիցըն՝ զոր ատեամ՝ ըզմոլեգին զառանցանս .

Մատուցուք նրմա զըսպաս , որում գրտաւ գերարժանի .

Եւ առ ի հաշտ ըզգայրագին ըստուեր նորին առնել ի սպառ ,

Սիրուհի նորին՝ թէպէտ եւ ճեա տոհմին անիրաւի

Ոյր դաւ ընդդէմ գործեալ գահուս՝ լիցի ի դուսար ինձ ի սեր-
կեան :



